Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Gwyneth LEWIS

Angylion Anhrefn

Cerddi

/Fersiwn Armenaidd/

Cyfieithwyd gan Kristina Kocharyan

Gwyneth LEWIS

Chaotic Angels

Poems

/Armenian version/

Translated by Kristina Kocharyan

Stepanakert, 2020

ԳՎԻՆԵԹ ԼՅՈՒԻՍ

ՔԱՈՍԻ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

Բանաստեղծություններ

Թարգմանություններն անգլերենից՝
Քրիստինա ՔՈՉԱՐՅԱՆԻ

Ստեփանակերտ, 2020

ՀՏԴ 821.111-1 Լյուիս
ԳՄԴ 84(4Մբ)-5 «Գեղarm» հանդեսի մատենաշար
Լ 690

Լ 690 Լյուիս Գվինեթ. ՔԱՌՍԻ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ:
Բանաստեղծություններ (թարգմ. անգլերենից՝ Ք. Քոչարյանի)
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2020. - 132 էջ:

Ժողովածուն ամփոփում է Ուելսի արդի պոեզիայի ականառու ներկայացուցիչ Գվինեթ Լյուիսի ստեղծագործությունների ընտրանին: Հոգեբանական խորը պատկերավորումներ, բանաստեղծումի ուրույն ոճ ու հայացք՝ ահա այն հիմնական գծերը, որոնցով հատկանշվում է ուելսցի հեղինակի բանաստեղծական նուրբ ու տոկուն աշխարհը:

Հրատարակվել է Ուելսի գրականության
բորսայի ֆինանսական աջակցությամբ

Cyfnewidfa Lên Cymru
Wales Literature Exchange

Published with the financial support of
Wales Literature Exchange

© Gwyneth Lewis 1995, 1998, 2003, 2005, 2011, 2014
First published in the UK by Bloodaxe Books Ltd in 2005
Armenian translation © 2019 Vogi-Nairi, Armenia

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար/, 2020

ISBN 978-9939-1-1072-1

ՀՏԴ 821.111-1 Լյուիս
ԳՄԴ 84(4Մբ)-5

Հոգեգալուստ

Աստված ուզում է, որ գնամ Ֆլորիդա:
Ես կանցնեմ սահմանը վերահաս գողերի հետ,
ինչպես գրառված էր ֆաքսերում ու
մարգարեություններում,
և Էստոնիայի անցակետային հրեշտակը
կահազանգի համազգեստավոր թռչուններին՝
գործել արտակարգ, շեղել պահակներին,

որ ես անարգել անցնեմ: Իմ գլոսոլալիան[1]
կլինի իմ անձնագիրը. ես կզգամ ճամփորդության
սուր համն իմ լեզվի ատլասի վրա.
աղին Լեհաստանն է, թթուն՝ Դանիան, քաղցրությունը՝
Վիեննան,
և Հոգու մեջ գտնվող մարդիկ կըմբռնեն,
որ ամենայն իմաստուն Տերն ուղարկել է

մի աղջկա սերունդ՝ փրկելու Ֆլորիդան հզոր:
Ես կանցնեմ Եվրոպայի միջով անմար կրակի պես՝
արագ, անդադար, կանգ կառնեմ միայն
վերանվանելու մի պատահական քաղաք. Սոֆիայում
հազարավոր մարդիկ դավանափոխ եղան, հարյուրավորներ
Սուրբ Հոգով ընկան Սենի երկայնքով:

---

1. Գլոսոլալիա - Արտասանություն, որը բաղկացած է անիմաստ խոսքերից ու բառակապակցություններից, որը հասկանալի խոսքի որոշ նշաններ ունի (տեմպը, ռիթմը, հնչյունային կառուցվածքը, հանդիպող ձայների հարաբերական հաճախականությունը):

Կյանքն իմ տարեգրությունն է քո. օ՜ վերածնված
Ֆլորիդա, հետ նայիր անցյալիդ,
և պատրաստիր քո Հոգեգալուստը
գոլֆի խաղադաշտով ու մայրուղիով, առևտրի
կենտրոնով ու մեքենայով,
այնպես, որ նարնջի այգիներում վառվող կրակը
լույսի վերածվի քաղցր մնջանքի մեջ, իսկ գերեզմանները

դառնան ապագայի փեթակներ. Ամերիկա բառը հնչում է
որպես տափաստան Էվերգլեյդսեի[2] լեզվով,
որտեղ արմավենու պտուղները կախված են հանց
նռնակներ՝
պատրաստ պատառոտելու օդի հետ բոլոր
պայմանագրերը:
Կոկորդիլոսի պոչում S-ածև նշանը
կատարյալ իմաստ կհաղորդի մատենասերին,

ով կուսումնասիրի երկիրն այս, նրա երկրորդ Թորան[3]:
Ահա ամեն ինչ բացահայտվեց: Հիմա սպասում եմ
Տիրոջը,
որ անցնեմ երկինք ու երկիր, որ ինձ ուղարկի արտերկիր
իրագործելու Ֆլորիդա մեկնելուս խոստումը վառ:
Մինչ ես կանգնում եմ ձեռքերս խաչած, Նա
տեղափոխվում է Իր մայրցամաք.
Ատլանտիկան փակվում է, ժամանակի ցուցանակը
տրվում է վարձով:

---

2. Էվերգլեյդս - հատուկ արևադարձային բնական պարածքային համալիր, որը գրավում է Ֆլորիդա թերակղզու հարավային մասը ԱՄՆ-ի նույնանուն նահանգի պարածքում:

3. Թորա - հրեական ավանդական կրոնական օրենքների ամբողջություն:

Սքոմերի[1] դաշտամուկը

Երեսուն տարի արվարձանային մի բնագետ
ուսումնասիրել է ՍՔՈՄԵՐՅԱՆ ՄԿԱՆ կյանքը՝
որպես կրծողների հազվագյուտ տեսակ:
Գործընկերները նրան թիթիզ պուրիտան[2] են համարում,
նայում կղզիաբնակ նրա տեսակին շատ վերևից,
իսկ նա հիացած է այդ խիստ արտասովոր արարածով
և, ընդհանրապես, տարաշխարհիկ ՍՔՈՄԵՐԻ
ամեն ինչով:

Նա առանձնացրել է մի շարք յուրահատկություններ.-
ռեմզի դաշտամուկը իրոք հրաշալի է,
ախ, այո, նրան դուր է գալիս նաև մեծաչղջիկը,
իսկ սքոմեր դաշտամու՞կը. կրքոտ հավատարմությունն
ու անվերջ հետաքրքրությունը նրա ելումուտով՝
կատարյալ է, նաեւ՝ անմնացորդ,-
նա, ով արձակել է կղզու միակ նավը

և շրջապատված է ջրաշխարհով, պարզապես մնաց
իր ինքնաքսորում:
Գաղտնի ասած՝ նա փայփայում է առասպելական
մի փեզ.
Մովսես նախամուկը առաջնորդում է մկների երթը
մայրցամաքի ողորկ սանդղավանդի զառիթափն ի վար,
խճուղով տանում դեպի Սքոմեր,

---

1. Սքոմեր - Ուելսի արևմտյան ափին գտնվող կղզի

2. պուրիտան - բարքերի՝ վարքագծի խիստ անբասիրության ջգտող, նաեւ՝ մաքրամոլ, մաքրակրոն

դեպի մտացածին մեկուսացում և
դեպի գերբնական անվտանգ ինքնություն:

Դաշտում բարեպաշտ է, ունի բազեի տեսողություն,
ով բացահայտում է ծնունդներ, մահեր ու
զուգավորումներ,
քանզի մարդու կյանքը, սկիզբ առնելով
ՍՔՈՄԵՐՅԱՆ ՄԿԱՆ
ցեղերից ու դինաստիաներից, ահա շարունակվում է
սերնդե սերունդ:
Նա հարցի նման երկար ձգվում է, մինչդեռ վերևում
երկինքն ապարդյուն փորձում է դիպչել նրա
երևակայությանը.
անձրևաամպերը հերթով-անաղմուկ շրջանցում են նրան,

քանզի նա աշխարհին ներկայացված է ոչ թե վեհությամբ,
այլ ինչ-որ էակի գունատ տեսքով, որի պոչափայլին
պետք է սպասել,
կամ՝ մշուշապատ խոտաթմբի տեսքով տղամարդու:
Ոչ, նա սիրատածում է իր խոր զարմանքով,
գրավում այն կտոր հողի ուշադրությունը, որ նա զգում է,-
գուցե մի երեկո նա կնավարկի
դեպի իր հոգատար ու սիրած ամուսինը:

Փնտրելով կելտեր[1] ցեղախմբին

Մեքլենբուրգի դքսուհին ուղղում է մեջքը,
նայում իր խանդավառ ջահելներին,
և սկսում պեղումները Զալցկամերգուտի[2] մեղմ
անձրևի տակ:
Նա իր բրիչը փոխանակում է հայտնի քլունգով,
հայացքը հառում Հալշտատի[3] բարձր լեռնագագաթին,
հետո, հանգստացած, կրկին պեղում է գերեզմանը:

Նա մոտեցավ: Այժմ կարող է առնել նրա հոտը:
Դողացող ձեռքերով
նա տեղավորում է ոսկորներն ու խեցեղենի մանր
կտորները,
առանձնացնում կելտական մետաղադրամները:
Նա ծնկի իջավ մոռանալով, որ այդտեղ ինքը միայնակ չէ,
ապա ոտքի ելավ և հաղթական ճիչ արձակեց,
քանզի դիպչում էր նրա բիրտ կրծքին ու բարբարոս
գոտկատեղին:

---

1. Կելտեր - լեզվով և նյութական մշակույթով իրար մոտ, հնդեվրոպական ծագում ունեցող ցեղեր, որոնք հնում զբաղեցնում էին Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի տարածքները:

2. Զալցկամերգուտ - պատմական մարզ Ավստրիայում, Զալցբուրգից արևելք:

3. Հալշտատ - կոմունա Ավստրիայում, Վերին Ավստրիա դաշնային հողում:

Մեքլենբուրգի դքսուհին ականավոր հնագետ էր, Հալշտատում գտնվող կելտական աղի հանքավայրերում պեղումներ կատարող պատասխանատուներից մեկը:

Սովետական մատուցողը

(Վիվեկային)

Ես սովետական մի մատուցող եմ
մեծ ու ամուր հետույքով:
Ես իշխում եմ մարդկանց վրա
իմ տիրական բարձունքից:

Ողորմությունս չափվում է օղիով,
որ մատուցում եմ ձեռքի մի շարժմամբ:
Երբ օտարերկրացիք ժլատ են լինում,
ես ձևացնում եմ, թե չեմ հասկանում:

Ես ծայրաստիճան անժպտերես եմ,
ես դժվար գտնվող ապրանքի տեր եմ:
Դուք պահանջում եք, ես մատուցում եմ. այսպես հիշեցեք
իրավիճակի ճիշտ դիվերսանտին:

Հարմարավետությունն իմ արժեքուղթն է,
անհարմարությունն՝ ողջ ունեցվածքս:
Երբ տղամարդիկ ուտելիք են խնդրում,
ես գիտեմ, որ դա վաղուց պատրաստված է:

Արտասովոր բարեգութ մեր դիկտատորը
սահուն ներս է մտնում ճոճվող դռներով,
բայց կարճ մի պահ անց մենք սկսում ենք մեր
աշխատանքը,
իսկ նա փայլեցնում է միջանցքի հատակը:

Մոռացիր կատարյալ ծառայության մասին,
ես սոված եմ և հույսս նոր ցարն է:
Գուցե չքվեարկեմ ընտրություններին,
բայց, անշուշտ, կբերեմ ինքնաեռը:

Ես ճաշում եմ ճաշողներին լարված սպասելով,
և գիրանում նրանց լուռ զայրույթով:
Մատուցողի տարիքը հաշվում է ստուգապես
Կրեմլում երդում տված տղաներով:

Շրջանը վերածել քառակուսու

Մարիա Բուրգունդ (1457-1482)
Ֆիլիպ Գեղեցիկ (1478-1505) = Խուաննա Խելահեղ (1479-1555)

Ահա Մարիա Բուրգունդի
մարմինը
արկղի մեջ, որտեղ
գտնվում է որդու՝
Ֆիլիպ Գեղեցիկի սիրտը:
Ճի՞շտ էր արդյոք
դառնալ
այդքան կենտրոնացած…

Իսպանիայում գտնվող մենաստանում,
իր կանանց կողմից
բոցավառված
Խուաննա Խելահեղը
պահպանում էր նրա
գոթական ցասման ջերմությամբ
կրակված մարմինը,
այսպես պետք է լիներ նրա ճակատագիրը.
նրա կաստիլիական ատելությունը:

Իսկ ով կասի իրականում
որտեղ է նրա սիրտը գտնվում…

Եվ հարսանյաց սրահում
Մարիային օղակող անդաղրում մարդիկ
կախվել էին իսկը դիմանկարների պես,

այնպես որ, նրանք երբեք չեն մտածել
կենցաղից դուրս
երեք իշխանությունների
այս արտասովոր ընտանիքը նորից
վերակազմելու մասին:

Քանզի սրանք իրոք
մարմիններ չեն,
այլ՝ քաղաքականություն,
իսկ ճշմարտությունն այն է,
որ Ֆիլիպի վերադարձը
պատճառն էր մոր
սրտի կաթվածի:

Հոգու հանքահորը

Ուղեցույցը մեզ տարել է կուսանոց,
որտեղ ոչ ոք չէր խոսում անգլերեն,
մոտակայքում քարհանք էին
պայթեցրել գրանիտի համար
և աշխատում էին մաքրել
կառույցներն ու պատերը խամքարի
ապարներից: Մութ վանքում
միանձնուհին լուռ փորում էր օդը՝
կառուցելով շնչառության ու աղոթքի արձանը:
Հերոս քույրեր: Նրանք իրենց հետապնդող
հոգու հանքահորերն են:
Սերը գիշատիչ է՝
լռության ու պասսիվության լավագույն
ուղեկիցը:
Կոտրած սիրտը նրա սեփական պաշտպանն է:
Ապառաժից հոսում է քչքչան ջուրը:
Մտքերն ու հանքաքարերը հնազանդվում են իրենց
ծանրությանը.
սառը քարերը, որ կանայք համբուրում են, պայթում են:

Վատ հովիվը

Կոռնելիուս Վառլին* գլուխ է հանում
գյուղատնտեսությունից.
նա ձեռքի տակ ունի գեղատեսիլ կալվածք.
«Իմ համրերը հսկում են դարպասի մուտքը:
Ձայնավորներս տեղավորում եմ վարձկանների հետ,
կիսաձայները նստում են փարախի մոտ:
Իհարկե, ես թույլ եմ տալիս բաղաձայներիս մշակել դաշտը,
քանզի նրանք սովորեցնում են երեքնուկին՝ ինչպես
եկեղեցուց
ստանալ բաղաձայնով վերջացող երգեր»:
Բայց ես անշնորհք եմ և խանգարում եմ շուրթերի
ծառայությանը:

Որովհետև ես այն մեկն եմ, ով հնձում է ցորենի իր արտը,
մեղմորեն խոսում է, մինչ սպիտակում են ցողունները,
ծանրանում հասուն ականջները: Հետո ցանում եմ իմ քենը
և ծիծաղում՝ տեսնելով ինչպես են շարքերը մեկեն
խուճապի մատնվում,
երբ խռովության կոչը տարածում եմ լեռնահովտային
քամու հետ,
մինչ դրանք կխորտակվեն: Հետո նա մարդիկ է
ուղարկում, իսկ ես
լուռ հետևում եմ, թե ինչպես են նրանք դանդաղորեն
հնձում
նրա տարեկան հարկը՝ ինձ շնորհված հողից:

---

*Կոռնելիուս Վառլի (1781-1873) - անգլիացի գեղանկարիչ և օպտիկական գործիքների հայտնաբերող: Նա ստեղծեց գրաֆիկական ասպղադիպակը և գրաֆիկական մանրադիպակը:

Դառնալով հասարակ

Ով կարող է դիմակայել դիջերիդուի[1] հնչյուններին
Քվին փողոցի մեջտեղում՝ այն էլ մեկը չէ,
այլ երեքը բերված Հյուսիսից.
ամեն մեկը նվենու պես կոպիտ-անմշակ է:

Քանզի շինարարները կորցրել են նրանց,
ովքեր ջրի պես փոթորկվում են ու ճլմփացնում,
նրա շնչառության ահռելի խորությունը
ներծծվում է ու հետո չքանում

և արտաշնչվում վերնաշապիկների ու գրասենյակային
կիսաշրջազգեստների տակ՝ ազատ ու անփույթ...
Իշամեղվի լուսանկարիչը
քաղցրության համար խլել է տղամարդուն բոլոր
հրեշտակներից,
իսկ կանայք, ովքեր երկար քրտնում են նրա շուրթերին,
փոթորկվում են հանց լեռնային գետեր,
պղտորվում հանց դելտա տիղմով,
բերուկով[2] լեցուն: Տղամարդիկ անվստահ

խոնարհվում են իրենց կանանց ետևում
տկարորեն, բայց և կարմրախայտ ինչպես.
շիմպանզեներն այժմ

---

1. Դիջերիդու - Փայտե փողային երաժշտական գործիք: Աշխարհի ամենահին գործիքներից մեկը:

2. Բերուկ - Հոսող ջրերի առաջացրած նստվածքներ, կազմված են գլաքարերից, մանրախիճից, ավազից, կավից:

անկաշկանդ ցատկոտում են լաստակի վրայով
և ծղրտում նոր ժամանած մակաու թութակների հետ,

կռունկները ոստնում են, խոնարհվում ապա, փայտից
ելնող ձայնը

ստիպում է տղամարդկանց հիշել տիղմի և սավաննայի
խառը կենսագրությունը, թե ինչպես այն ժամանակ
երկինքն իր կապույտը կամարակապեց ու
առաջ շարժվեց:

Տեղեկատու գրադարան

(բացել վեցերորդ կարգի գրադարան
Ըզգոլ Գիֆըն Բայդֆելենում [1])

Ինչ-որ մի տեղ կաշվե կազմով հատորը պահում է
հեռավոր դարերի տեղեկություններ
տիեզերագիտության ու քրիստոնեության մասին,
ինչպես է դեղ պատրաստվել մեղվամուշկ բույսով,

ինչպես են ստացել մետաքսը, ինչպես է տարածվել
լատիներենը՝
հանց ճանապարհներ թագավորությունում, որն այնուհետ
դարձավ
ճարտասանության ու օրենքի լեզու, եղավ առաջատար
և թույլատրեց մարգարեացող ձկներին պատմել

իրենց ավանդությունները մահկանացուի մեղքերի մասին,
ինչպես են ապառաժների գագաթներից սերվել ժայռոտ
տղամարդիկ
գրանիտի լեզվով, բազալտի շնչով,
որ կանգնեցրին սպասված նվաճողներին:

Որքա՜ն ընդգրկուն: Նայիր շուրջդ հիմա.
բառացանկն ունի բթամատի եղունգի հաստություն լոկ,
վաֆլու բարակությամբ հանրագիտարանը ցույց է տալիս՝
ինչպես են սպանվում նոր լեզուները,

---

1. Ըզգոլ Գիֆըն Բայդֆելեն - հանրակրթական դպրոց Ուելսի Ռոնտրդա Քանըն Թաֆ շրջանի կոմսությունում:

կան ցուցումներ պետությունների ղեկավարների համար,
հիվանդությունների ցանկ իրենց բուժումներով,

տրանսպորտային տեխնոլոգիաների մասին,
քաղաքների աղքատության կմախքի մասին...

Բայց ի տարբերություն հանրագիտարանն ունի
աղքատիկ պաշար: Նետեք մեծ հատորներն ու
օրացույցերն իրենց լոգորեայով[2]:
Կարդացեք, նախ, ձեզ հետաքրքրող բառագանձարանը,

քանզի ձեր կոնակում և ոչ թե գրքերի բյուր էջերի մեջ է
կայանում ապրելու ճշմարիտ ուղին լավագու՜յն
գրադարանը ձեր,
և ձեր աշխարհայացքի խորամտությունը
հին բառերը կդարձնեն նոր աստվածաբանություն:

---

2. Լոգորեա - խոսքի պաթոլոգիայի ախտանիշ, խոսքի հրահրություն, բամբասանքություն, խոսակցությունների տարածում:

ԶՐՈ ՁԳՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տիեզերական ռեքվիեմ

Ի հիշատակ հարսիս՝
Ժակլին Բադհեմի
(1944-1997)

և ի հիշատակ իմ զարմիկ
Ջո Թանների և Սիդեյս Շաթլ STS-82-ի անձնակազմի
տիեզերագնացության, որ կատարվել է Հաբլ
տիեզերական աստղադիտակի վերանորոգման համար
(1997թ. փետրվար)

Տիեզերքի մասին մտածելու ամենահեշտ ուղին
ընդունելն է այն որպես մի ասպարեզ, որը մշտապես
ընդլայնվում է այնպես, որ ամեն ինչ ամեն ինչից
հեռանում է:

Տիեզերական փաստեր

I Նախաբան

Մենք նայում էինք՝ ինչպես էիր
փառահեղ գնում. ճամփորդիր,
գիսաստղ, հարս իմ:

Մեկը վերադարձավ:
Մյուս երկուսը
մեկնեցին հեռու: Սերը հարձակում է

ժամանակին: Անիծված ամեն բան
պայթեց՝ թողնելով
մեզ հետհաշվարկի օրերի հետ,

որոնք ավելի են զրոյից:
Իմ նյութը բազմազան է:
Իմ տեսակետը՝

խանդավառ: Տեսնում ես՝ ինչպես է
արագությունը փոխակերպում մեզ: Չգիտեիր,
որ ժամանակը վիպասք է. դրանով չենք

ճամփորդի: Հեռավորությունը
տեսնելու համար է.
հավատքը, զգացմունքը

անտես օբյեկտներ են:
Իհարկե, սա սփոփանք չէ, քանզի
մենք դիտում ենք՝ ոնց ես ի կատար ածում

քո վտանգավոր ճամփորդությունը:
Այս մտքից վեր բաները
վնասում են խիստ, երբ ետ ես մնում:

Մի լքիր մեզ:
Մենք շատ բան ունենք միմյանց ասելու
մինչ մութն ընկնելը: Մի գնա: Մի քիչ էլ

մնա: Բայց դու անհասանելի ես
արդեն: Մեր գլխավերևում երկինքը
նայում է իր տրիլիոն-տրիլիոն աչքերով:

II

Օր առաջին Ուոկալա Բիչ պանսիոնատում:
Լանչի համար այստեղ հավաքվել էինք վաթսուն հոգով:
Երեխաները մողեսներ էին գտնում լողավազանում,
գնումներ կատարում Ռոն Ջոն խանութից: Ես ուրիշից
սերֆեր եմ վերցնում ու հիանում: Ցերեկային գործս
նրանց սերֆինգը[1] դիտելն է: Ծովն իմ վերնաշապիկն է,
ալիքն իմ ներքնազգեստը: Անվաչմուշկ քշողների մեջ
ես դիտում եմ այն տղաներին, ովքեր ընկնում են
առանց վնասվելու,
ասես հավալուսներ լինեին, որ կոճկում են երեկոյան զգեստը
անվաչմուշկներով: Եղբայրները սպասում են,
յուրաքանչյուր գլուխ մի մոլորակ է ծանծաղուտների
բոցերում:
Նրանք կույր են բոլորի հանդեպ, նրանք մի
համաստեղություն են, որոնց ձգողականության ուժը
ստիպում է նրանց ալեկոծվել, եւ առաջ
անցնել մեկը մյուսից, թափահարելով բազուկներն
իրենց, փնտրելով
կոտրված ալիք՝ բարձրանալու համար, փայլող
մարմիններով ետ են
վազում՝ պայմանավորվելով ցատկել վերստին: Նրանք
ծիծաղում են փրփուրի մեջ,
և ես տեսնում եմ խավարումներ, էլիպսներ՝ բեկորների
պղպջակներում՝
ասես փակագծեր դրսի տարածքից: Այստեղ են նրանք
կարողանում շնչել:

---

1. Սերֆինգ - ջրի վրայով սահք հատուկ տախտակով՝ սերֆերով, որը սովորաբար պատրաստվում է թեթև, ամուր պլաստմասայից և պատվում է խեժով ու ապակեթելով:

III
Կարծես նա խեղդվում է
վուշե ալիքներում:
Նրանք մանուկներին հանց տեսախցիկներ են բերում
նրա անկողնու մոտ,

քանզի նրանք այլեւս անկարող են տեսնել
մահացությամբ:
Նա բավականին լավ տեսք ունի
հեռանալու համար: Նա լսում է
մեր պատմած կատակները

ինչպես ենք հանդիպել ու ամուսնացել:
Նա էլ է պատմում մի պատմություն.
նրա ընկերը լրիվ խելագարվեց՝
հոգ տանելով, կերակրելով, արյունահոսությամբ՝ երեքը

միանգամից: Նա փորձել է թաղել
իրեն Բերրի Կղզու ավազների մեջ:
Նրա աղոթքի բույսը ծաղկել է
յոթ տարի անց: Նա Ռոբերտին ուղարկում է

այն հետ բերելու սբ. Համակարգից.
Նա կարծում է, իբր մեղվի խայթոցն է
առաջացրել քաղցկեղ:
Մենք չենք կարող ասել ճշմարիտ ոչինչ:

IV

Ձանձրանալով՝ վաղ առավոտյան իջա Կոկո լողափ, ուր
երեխաներն ամրոցներ են սարքում: Ես գիտեմ իմ
պատմությունը.
երբ նրանք, ջրիմուռներով պատրաստված դրոշներով,
նորմանդական
աշտարակը խոյացան, ես սկսեցի կառուցել
Քայրֆիլիի
համակենտրոն ամրոցը: Հնգամյա Մերին,
ով մեզ համար բերում է ձեռքն ընկած խեցիները,
զարմացած հայտարարում է. «Ես եմ իմ ղեկավարը»:
Նա իր կենտրոնն ունի: Ավազներում մենք
արագ կառուցում ենք բերդապատնեշներ, իսկ Սառան
ատամնավոր
պարսպով ապահովում է շուրջանակի պատերը:
Ինքնամփոփ լինելը
կարող է լինել ժամանակակից. մենք պլանավորում ենք,
բայց
շուտով խնդիրներ ունենում մեր իսկ նախագծերից:
Այնքա՜ն պետք է կոփվենք մեր ծրագրերի համար:
Մեր միջնաբերդն ավերվում է խաղաղ ալիքներից:

V

Առաջին անգամ տեսնելով գիսաստղը՝ ի վերջո
հասկացա,
որ ընդմիշտ կսիրեմ նրան: Ես հետևում էի՝ ինչպես է
նա մտնում

խավարի գիրկը՝ մարած արևի պատճառով
սառը աստղազարդ երկնքում: Եվ հեռացել էր

իր պայծառությունը հասկանալուց առաջ,
մարդկային պահը անսահմանության մեջ

պարուրում է բոլոր մանրուքները: Ես զգում եմ նրա
ձգողականությունն իմ արյան աղերի մեջ:
Գիսաստղի պոչը

ճառագուն լույս է հեռուներից հայտնված,
որտեղ մի ժամանակ թողել ես քո սիրտը,

իսկ հիմա չկա ոչ մի համալրում: Օ, հոգիդ եթե
միայն կարողանար ապահով փախչել իր իսկ սև ճեղքից:

VI

Իմ տեսանկյունից՝ վերջին ընթրիքները լինում են
լայնէկրան:
Ես այս մեկը տեսնում եմ լուսանկարում. քո եղբայրները
հանգավորված են
քեզ և միմյանց հետ: Հովհաննեսի աչքը կապտել է
սերֆինգից: Մենք արդեն սկսել ենք ժամանակի
հետհաշվարկը
մինչև զրո: Մաքոքը նորոգվել, դարձել է
կուռք իր հեթանոսական սրբավայրում:
Այն տեղադրված է կառափնարանին, որին խնամում ու
օրհնում են
քահանա-տեխնիկները: Դու հրաժարվում ես իզուր
տրտմելուց,
անզոր ես սպասել գալիք հարսանքիդ, արագ դուրս ես
գալիս և
մղվում դեպի մոտիկ անկշռություն: Մենք հետևում ենք՝
ոնց ես
հագնում նարնջագույն տիեզերական կոստյումդ՝ հանց
հարսնացու հնդիկ
հինային փոխարինած մետաղալարով՝ գրավչության
համար:
Դու կրում ես քո սաղավարտն՝ ասես գլուխդ կորցրած:
Մենք քեզ տեսնում էինք՝ արդեն հեռացող մեռյալ որպես:

VII
Նա ճամփորդում է ներքուստ:
Հետադարձ հայացքն այժմ
անցյալ իրադարձությունների հիմնախնդիր է:
Նա գործում է արդեն խավարի համար

ասես չլինելով մարդ արարած:
Հիշելու հերթը հասել է
Ռոբերտի ծննդին.
հիշեց հղի ժամանակ

լոգարանի հատակի սալաքարին
ընկնելը, որից փրկվեց սակայն:
Մետաքսե պարաշյուտաձև զգեստները
պատերազմից անմիջապես հետո:

Սև պուտերով ծառը, պարտեզը, Վիկտորիա սալորը:
Հետո ոչինչ՝ մինչև տաս տարեկանը,
երբ մի տղամարդ հարձակվեց նրա վրա:
Հավանաբար այդ ցավն էր, որ

արագացնում էր կյանքը եւ ամենայն ինչ:
Նրա սրընթաց միտքը
թողնում է մեզ ներկայում,
իսկ ետևում՝ երկար մի ճանապարհ:

VIII

Հազարավոր մարդիկ ժամանում են, երբ թռչունը
պատրաստվում է թռչել,
և ժողովվում խճուղիում: «Հյուստոն: Մեկնելու եւ
հաշվելու եղանակ»:
Ես աղոթում եմ քեզ համար, քանզի պառկած ես
մեջքի վրա դեմքով դեպի վեր: Պաստառին ցուցանված է
տեղական երթուղու ու տիեզերական ժամանակը:
Թվերը սպառված են: Հայտնվում է զրոն:
«Հիմնական շարժիչները լռված են». իսկ ես
պատրաստ չեմ սրան, գոլորշին ամպերի պես
կոհակաձև դուրս է նետվում, և անսպասելի մի կայծ
բարձրացնում է հրթիռը միակամ մռնչոցով,
որը բխում է մեր ներսից: Խլացուցիչ ճայթյունով
պայթում է տիեզերանավն ու վերածվում հրե ծաղկի
կառափնարանի առէջում: Մենք հեկեկում ու
հայհոյում ենք
անօգնական, բայց արև ենք վեր հանում
մեր սիրո ուժով, մենք լսում ենք
«Շաթլի» մահվան աղմուկը. այն հաղթահարում է
իր իսկ ծանրությունը փառքով՝ ազդանշանները
զետեղելով
հանգույցներում, և հետո դուրս գալիս
մեր ժամային գոտուց՝ սուզվելով խավարի
անդորր, իսկ մենք կորցնում ենք կիտրոնագույն
լուսաբացը,
որ ծնել է քո անհետացումը: Տեսադաշտում
նարինջ ենք հավաքում կորցրած լույսիդ համար:

IX
Մի օր առաջ
իր գնալուց, ասաց.
«Ոչինչ էական չէ»:
Այժմ, երբ նա չկա,

ասես մաքրվել է մեր
նյարդային էկրաններից:
Մենք այլևս չենք հասնի նրան:
Բայց Ժակլինը,

թեկուզեւ չկա մարմինը նրա,
նրա պատմությունն ու
նրա վերաբերյալ մեր խոհերը բոլոր
ազատ են հիմա

ամենայն աղբից,-
պայթյուններ՝ աչքին,
որ ընկալում է աղոտ գույները
ներքին երկնքում:

Նա գերնոր աստղ է,
որ զվարթ ճառագում է
իր ավարտուն ու ջինջ էությունից:
Ի բերկրանս մեզ՝

կտրում ենք նեյտրինոները
նրա ավերված միջուկանյութից,
և ի զորու չենք կտրել մեր աչքերը
նրա շշմեցուցիչ աստղակերպից:

X

Դրյուն լողավազանի կողքով անցնելիս սայթաքեց՝
դիպչելով իր ստվերին,
բայց իրեն հավաքեց: Մենք շարունակում ենք նայել
հեռուստացույցին
հուշակրակի պես, լսում ենք ինչպես է Առաքելության
Վերահսկիչը
նոր ցուցումներ տալիս. Դու արև ես, որին
հետապնդում ենք մենք՝
հետևելով քո ժամանակին նույնիսկ Աֆրիկայի
ֆովիզմական[2] շեկ
անապատում: Մենք տեսնում ենք, որ գահավիժում ես
անցյալի պուանտիլիզմական[3] Բահամներում,
սառցադաշտերի ու խոր փոքորիկների մեջ, մոռացվող
Նեղոսում:
Մենք բոլորս մթին գավառացիներ ենք, երբ խոսք է
բացվում քարտեզի մասին,
ուստի մենք փնտրում ենք Ֆլորիդան: Աշխարհը
ճանապարհ է
քո գլխավերևով, բայց դու չես կարող վերև բարձրանալ,
դու միայն ուղեծրով կարող ես սուզվել Խաղաղ
օվկիանիոսի

---

2. ֆովիզմ - (ֆրանսերեն fauve վայրի) արվեստի մոդեռնիստական ուղղություն, որը ձևավորվել է Ֆրանսիայում 19-րդ և 20-րդ դարերի սահմանագծին և դրսևորվել է գեղանկարչության ու երաժշտության մեջ:

3. պուանտիլիզմ - (ֆր. Pointillisme, բառացիորեն կետայնացում) գեղանկարչական ոճ, որում ամբողջական պատկերը ստանում են հիմնական գույներով նկարված առանձին-առանձին մանր կետերի բազմության միջոցով՝ երկրորդական և միջանկյալ գույների տեսողական խաբկանք ստեղծելով:

օպալի ուղղությամբ, այժմ կարող ես տեսնել լուսաբացը
ինչպես որպեն մեկ: Շաքլը մի ցից է, որ
սերտ միացնում է քեզ ու նրան, ուղղահայացորեն
ընկղմվելով ազատ
ներքև իջնելիս: Միայն դու ես
դիմանում նրան այնքան, մինչև չես կորցնում
ավյունդ: Հետևապես՝ քո հոգին նավ է:

XI

Երկրորդ անգամ, երբ գիսաստղը վերստին շողաց,
դանակը խոր մխրճվեց: Եվ ֆշշալով աստղը սուրաց՝

ինչպես ֆոսֆոր ջրի վրա: Եվ նա նշեց պահն այդ՝
իր հայտնությամբ հրաշք, մեր իմացած փաստն այս

հիշելու համար: Ցնորական ուղին նրա
մեր ուղերթն էր արտացոլում, իրար

հանդեպ տածած մեր կրակը, ցուրտն անսահման,
որ խեղդում էր ջերմությունն այդ: Մի խաբվեք վառ

հրավառության գեղեցկությամբ: Սխալմունք չէ՝
հեռացումը
մարում է, բայց փորձում է հանգավորվել
սիրո ցույցով:

XII

Քո տեսողությունն արդեն կարելի է գործածել
տիեզերքում:
Այժմ աստղադիտակը քո ձեռքին է, միգամածությունը
ծննդանշան է նորահայտ քո դեմքին:
Արևի ցոլքը կիկլոպ-աչք է ստեղծում
քո երեսկալին: Նոր սպեկտրագրությունը, որ
տեղադրել ես Հաբլում հնի փոխարեն,
սև խոռոչի սլացքն է մոտեցնում մեզ, եւ մենք
հասկանում ենք
ժամանակի հետընթացությունը տարածության մեջ,
տեսնում աստղեր՝ բացված
միջուկային այգիներում, գալակտիկաներ
սերմնահեղուկի պես
ջրերի մեջ անկանգ պտտվելիս, ջահել աստղերի ցան,
թրոմբից ժայթքող աղետներ սին, տենդոտ պարսի
խայթուն պայթյուններ: Բայց նույնիսկ հեռվին տրվելով՝
վնասների տարափը չի դադարում: Տվեք ինձ հայացք,
որն ավերակների միջով կթափանցի մեր Համակարգի
խորքը,
մինչև իսկ՝ սրտի միայնակ պուլսարներ, թույլ տվեք
զարմանալ
կարմիր փոփոխություններով, կատարյալ
լուսավորությամբ,
որ խայտում է մեր շուրջ, երբ մենք զրուցում ենք
ծովեզերքին,
կարծելով մեր շուրջ ոչինչ չկա մաքուր զրույցից բացի:

XIII
Որն է, սակայն, նրա անհետացման կետը:
Այժմ, երբ նա մահացած է, բայց դեռ
զգում ենք նրա ներկայությունը մեղմ,
կարծում ենք, որ նա լսել է անտես

խոսակցությունները մեր:
Տեսադաշտից դուրս: Եվ մտքից դուրս նաեւ:
Իր ներքին ճամփորդության ժամանակ նա
դեգերել է հիշողության

հովիտներից այն կողմ: Նրա բազմաչարչար
կրծքավանդակից
բարձրանում է g-ուժը:
Մոռացությունը

անհոգության նվեր է: Նա
կտրել-անցել է ահռելի
տարածքներ, շրջանցել ապա
բազմաթիվ մարմիններ

քաղցկեղի, հույսի, հարգանքի,
ամուսնության ու ներողամտության:
Ազատվիր ժամանակից,
և ամեն ինչ աչքիդ դեմ կպարի թեթեւ,

մոռացիր ուղիղ գծերը,
դրանք արդեն ծռմռված-կոտորակված են:
Մնացել են սոսկ գիշերվա մեղրն ու
ցերեկվա մեղուների երաժշտությունը:

XIV

Մեռյալ լինելու մեջ կան որոշ ակնառու
առավելություններ:
Ասում են՝ Ղազարոսը կրկին չի ծիծաղել,
չնայած կասկածում եմ: Քո տիեզերական հագուստը
պատանք էր, և գիշերները արձանի պես քնում էիր
գետնաղամբանում: Լինելով անսահմանությունից
դուրս, դու ճաշակել ես կրկնամուտքի տոթն ու
մռնչյունը, հետո արյունը երակներիդ մեջ,
երեխայի պես, ստիպված էր գտնել քո տակ
գտնվող ոտքերդ, օրորվել կշռից, սովորել է հաղթահարել
ձգողականության ուժը կրկին: Դրան հաջորդեց հինգ
պետություններ շրջայցը Եվրոպայում:
Դու թույլ ես տվել մարդիկ դիպչեն քեզ, պատմել ես
տեսածդ:
Սա համարվում է մահ և երկրորդ ծնունդ
մի կյանքի ընթացքում: Այս տեսակետը
պետք է տա ուրախության քաղցր պտուղներ
սեփական անկարևորության գիտակցման մեջ, և այժմ,
չնայած
դու հանրահայտ ես եւ «ինչ-որ մեկը», գուցե ավելի
քիչ բան կամենաս:
Քո ծիծաղը անկշռության փափագ է զիլ:

XV

Գիսաստղի վերջին հայացք: Երկինքը քորոցներով
ծակծկված էկրան է՝ կախված իմ ու կատարվածի

միջև, սենյակ, որ ամենևին թաքնված չէ
ինձնից: Հեյլ-Բոպպի[1] լույսն ասում է

շլացուցիչ՝ ինչ-որ բան է կատարվում հեռվում,
շարժման հետ մեկտեղ: Իմ միտքը

արծաթե նիտրատ է էությամբ ագահ, բայց ես
չեմ կարող ընկալել դա այստեղ՝ խավարի մեջ:

Հիշողությունը կոպիտ տեսախցիկ է:
Ես կուզեի թառամեիր իմ ցանցենու վրա,

եւ ես կուրանայի ամեն ինչի հանդեպ
քո հեռացումը: Իսկ խավարը

բարի է: Արշալույսը կբուժի իր տաք գույներով
քո ինքնաոչնչացման՝ իմ ծանր վիշտը:

---

1. Հեյլ-Բոպպ - երկար պարբերական գիսավոր

XVI Վերջաբան

Հարևանները կազմակերպել են
հոգեհաց Շաթլի գերեզմանից
քեզ դիմավորելու առիթով:

Արթնացում արևի լույսի ներքո. երեխաները
սուզվում-ռմբակոծում են լողավազանը:
Իմ զգայության աստիճանը

պայթել է: Այժմ ես կրում եմ
ապակե ուլունքներ՝ հանց մոլորակներ:
Ականջներիս մեջ

քվազարներ[1] են: Երկնաքարերը կրում եմ
որպես ապարանջան, համաստեղություն
մանյակն այնքան պայծառ է,

որ, թեպետ սրտումս տիրած
մթությանը,
ես շլացնում եմ: «Այստեղն» ու «այնտեղը»

շողում են միասին: Անտարբեր հայրը
նետում է Սատուռնի մատանիները:
Սուզվիր նրանց համար՝ հիմա և գտիր բոլորը:

---

1. Քվազար - Երկնային ծագում ունեցող ռադիոալիքների ճառագայթման աղբյուր՝ հզոր էներգիայով օժտված հեռավոր գալակտիկայի միջուկ:

Ծղրտացող ջրցուլը*

Լսիր այդ ծղրտացող ջրցուլին:
Դու նրան երբեք չես տեսնի: Ինչպես որ եղեգներն են ճոճվում
այդպես էլ նա է ճոճվում,
հրապուրելով անտեսանելիությունը:
Ծղրտա, ջրցուլ, ծղրտա:

Տես՝ ինչպես է նա օրորվող սեզի մեջ
համակրանքով ցույց տալիս երկինքը:
Նա ունի մարմին,
բայց նրա ներկա քողարկումը
այս թռչնին դարձնում է աներեւույթ:

Հնարն այդ պահում է նրա կյանքը
վտանգից հեռու: Նա իշխում է լռության վրա, բայց
կմահանա միայնության մեջ: Ծղրտալը
նրա միակ հույսն է՝ նրա ճիչը
գուցե նրան բերի էգ ու ձագեր:

Ծղրտա՞լ, թե՞ ոչ… Մեքենայի ազդանշանը
վտանգավոր ոչինչ չի պարունակում, երբ այնտեղից
կանչում են ընկերոջը: Բայց ճահճում
քեզ դեռ պետք է գտնեն, և ոչ թե զուգավորվեն:
Դե, ռիսկի դիմիր, ջրցուլ: Ծղրտա, ջրցուլ, ծղրտա:

---

*Ջրցուլ - փառեխների ընտանիքին պատկանող թռչուն

Լավ շուն

Բոլոր ընտանի կենդանիները մի կենդանու մաս են
կազմում:
Նրանք մեզ նայում են ընտանի հայացքով
կեր ստանալու եւ մի աննշան սիրո հույսով:
Մարդիկ, ովքեր հավատում են վերամարմնավորմանը,
զգում են հեռավոր բարեկամի շունչը,
նրանց սիրտը լուսավորվում է նոր ձագի ծննդով,
ուրեմն, ապավինիր նրանց, ոչնչացրու նրանց:
Փողոցային շան ականջում տեղ գտած «օմ»*-ը
կարող է փրկել մահացող շան հոգին:

Մերը աստվածաբանություն է: Եվ նա գիտի,
որ փայտը կյանքում ավելի իրական է, քան կատուն,
և որ գնդակներն ավելի լավն են: Ամեն նետված բան
մեկեն սիրելի է դառնում, որի համար արժե հեռուն վազել:
Արգելքները, որոնք նա սիրում է, պատրաստ է անցնել
հաճախակի: Մկրտվողը ընկղմվում է ջրի մեջ լրիվ,
այնպես, որ անծանոթ ջրասամույրի հոգին
վերածնվում է չիփսի պայուսակ ու ջրիմուռի
ժապավեն ունեցող կերակրողի մեջ:
Նա կրում է շքանշանն իր ուրախությամբ:

Շան մասին կան որոշ սին զրույցներ՝
ստեղծված սառնասիրտ տղամարդկանց

**Օմ - հինդու և վեդական ավանդույթներում՝ սուրբ ձայն, բուն մանտրա, «ուժի խոսք»*

ու ազդեցիկ կանանց շրթունքներով: Հնարքներ կան
միայնակ տղաների ու աղջիկների համար.
շուն պահիր, զբոսնելու տար նրան: Խնամակալ
ունեցող շունը,

լինի այն տգեղ կամ ազնվացեղ, ասում է. «Սերն է,
որ ստիպում է
հարմարվել վատ սովորություններին ու հոտերին,-
մարդու մեջ եղած դաժանությունը կարող է բավարարել
իր կարիքները, ազատություն տալ ծածուկ
գազանությանը»:

Գիշերները մեր կենվորը ստանում է իր սիրած գնդակը,
վազում գետը եւ տրորում լուսինը:

Հոգու մոմեր

Ես ուզում եմ
դյուրավառ հոգուս
լույսի ներքո
ցույց տալ քեզ
տիեզերքը:

*

Մազերս կիզիչ օդի
արշալույսի շողերի մեջ են:
Մայրս կանգնած է գլխավերեւումս
և սանրում է բաշս,
փորձելով կարգի բերել այն:
Հյուսը պայթում է,
շաղ գալիս խավարում
հանց բոցի լեզվակներ՝
սնվելով նավթի
անկաշկանդությամբ:
Դեմքս նույնն է՝
ճարճատուն, բզկտված
մանվածքի տակ:
Ես ունեմ լիքը վառելայուղ,
կբոցավառվեմ երկար ժամանակ:

*

Նրա վրեժը հեգնական էր.
մենք երկուսով բենզինով
ցփնված մեքենայի մեջ էինք,
բավական էր վառիչի մի շարժում,

և ամեն ինչ կփոխվեր:
Բայց նրա ատելությունը
մեզ մերձեցրել է:
Նա տվեց մեզ սա.
ջիլերի խորքում
կիսում ենք հիմա
նյարդային վերջույթների կծկումները,
մեր փոխադարձ ջերմությունը
ամուսնությունն է,
մի կողմից՝ անտանելի բոց,
մյուսից ամուսնական գիշեր:

*

Նրա կատաղի կայծակը
շարունակում է հարվածել:
Նույնիսկ իմ երակները
ստեղծված են նրա կայծի համար:
Ես փնտրում եմ նրա ուժը
հանգստության մեջ:
Հոգու օդապարուկը
ձգվում է իր լարով՝
ենթարկվելով ահավոր,
կործանարար հարվածի:

*

Պայծառ ներկայացումից հետո,
որը հեռվից
այնքան դիտարժան էր,
բռնկվում է մի իսկական կրակ:
Եթե հոգում եք

ինձ համար, թողեք, որ հուրն այդ թեժանա,
թեժանա մինչև վերջ՝
լափելով կասկածը, գիտակցությունը,
լափելով էությունս,
որտեղ հալվում են բոլոր մետաղները՝
ստեղծելով հանքանյութ,
որն այնքան է թեթև՝ չի կշռվում:
Լուսավորիր իմ բացակայությունը
մի վերջին կայծով.
դա իմ ոչնչացումն է:
Հիմա ստեղծիր
արագության այդ կես կյանքը՝
անցնելով թվացյալ մութի միջով:

Երաշտ

Գյուղից վեր գտնվող տաղտկալի տարածքն այդ
անհրաժեշտ էր վառել: Ես մի քանի վայրում
սերմեր ցանեցի, մինչև որոճի ճանճրալի ծաղիկները

իրենց շուրջը ողջ դեղին չդարձրին,
իսկ այնուհետև այն սև դարձրին:
Եզրերին տնկել եմ էկզոտիկ ծաղիկներ,

հետո դիտում էի՝ ինչպես է հրդեհն իր ծուխը տարածել
մարգագետնով մեկ, անգամ հասել անտառ: Այդ խոտերի
միջից դուրս է գալիս ճնծաղկի փշրված եղանակը:

Խոսիր գլխացավի հետ

Ես ունեի սաստիկ մի գլխացավ: Ուր գնում էի՝
ինձ հետևում էր, չնայած չէի ուզում

նրան մոտ թողնել: Կախազարդի պես
արագ կախվում էր: Բայց հարված ձախից՝

իսկույն կսկսվեր միգրեն, սրտխառնոց և այլն
այնպես, որ իմ խավար սենյակը կլուսավորվեր

պոռթկումից: Այդ կարմրաթեժ չարիքը
նյարդացավի գլխարկն էր, նա դեմ չէր նաև

տինիտուսին*՝ նետված զվարճանքի համար:
Ես կփորձեի նուրոֆենի հաբերի տարափը,

բայց ոչինչ չէր փոխվի հաստատ, ոչ սառը ոլոռը,
ոչ դառնությունը: Ես ծնկաչոք աղերսում էի՝

խնդրելով նրա ողորմածությունը: «Դու պետք է տեսնես.
սա քեզ համար ավելի զվարճալի է, քան ինձ համար,

մենք պետք է ավարտենք դա: Ավելի լավ էր մեռած լինեի:
Ես քո կարիքն ունեմ՝ քո գլխի փոսի»:

Նա նահանջեց: Ես զգացի՝ ինչպես է նա հետ քաշվում
խոր վիրավորված: Այդ շաբաթ տոն էր

**տինիտուս - աղմուկի կամ իշշոցի զգացում ականջներում՝ բացարձակ լռության պայմաններում:*

ցավից ազատվելու: Այժմ ազատ եմ նրա բաբախումից:
Ես սկսեցի գործել անփույթ մարդու պես,

կերա ինչ ուզում էի, օրինակ, քյաբաբ, մինչև ուշ գիշեր
հեռուստացույցով անպետք բաներ տեսա,

մերձեցա կասկածելի կանանց հետ, չլսեցի նրա թողած
տաճարներից հնչող կայտառ զանգը, որ երբեք
չէր կտրում:

Բայց կան որոշ բաներ, որոնք ցավից վատ են:
Շուտով ես ինձ լիակատար խաբված զգացի

ախտանիշների գազանանոցից, գրեթե մեռած էի
նրանց լվռտուքից՝ իմ գլխի ներսում,

առանց խնամակալի: Եթե տեսնես նրան մոտակայքում,
ասա նրան, որ ես պայքարում եմ, ուզում եմ
գետինը մտնել

նրա հետ՝ ձանձրալի-սպանիչ կեսօրից հետո,
լինեմ ինձնից հեռու կամ՝ կխելագարվեմ,

քանզի թեեւ նա իր հագին ուներ հոգեմաշ ցավ,
հոգ էր տանում ինձ, իմ բոլոր անկարգություններին

պատասխանում էր առողջությամբ: Նա կին էր
ինձ համար: Եվ ես նրա դանակի կարիքն ունեմ:

Գարուն

Երբ մենք վերադարձանք փողոցը լիքն էր
դրանիկներով բոլորը հարբած ու
ագրեսիվ էին: Ես շրջանցեցի այդ թաղամասը
երեք անգամ խույս տալով նրանցից: Արու առաջնորդը

կատաղության մեջ էր: Տարածքի ծառերը զարկ են
տվել կրկին տերևների աճին ինչպես միջատներ,
մորեխների սիրված վայրը կարագով
լուսավորված սենյակներն են: Մեր օրագրերը

մեզ հույս են տալիս, որ գարնան տենդն ու նրա վերքերը
շուտով կանցնեն: Կարիք չկա հարցնելու ինչու են
թռչունները երկնքում ծղրտոցով սեր որոնում:
Փոթորկոտ ամպի պես մի ձուկ կուլ տվեց մեր լուսինը:

Աղոթք Բենդիի համար

Եթե շունը մեռնում է, չի նշանակում,
թե նա այլեւս դադարում է հսկել:
Ինչ վերաբերում է շան հոգուն,
ես ունեմ իմ իսկ տեսակետը:

Ես պահում եմ նրա շունչը ձեռքիս ափի մեջ՝
ծաղկի պես թարմ: Հանգիստ մնա հիմա:
Նա մեզ տվել է մեր զորությունը
նրան սիրելու համար: Հավանաբար շները

կմեղանչեն մի օր կծելու համար: Խղճացեք նրանց
շուն լինելու եւ չհասկացության համար.
մենք նույնպես մեղանչում ենք: Հուսով ենք, որ
նա ներել է մեզ իրեն սպանելու համար:

Անցած գիշերվա երազի մեջ նա հաչեց տան մոտ:
Մենք բացեցինք դուռը երեք եթերային շների առաջ,
նրանք վազեցին դեպի իրենց բույնը, և վառեցին այնտեղ
օջախն իրենց, քանզի մենք արդեն կոշիկներով էինք:

«Մի օր, քաղցած»

Մի օր, երբ քաղցած էի, կուլ տվեցի լուսինը:
Այն թխվածքի պես մնաց իմ կոկորդում.
ասպիրինի նման չոր էր: Հետո կամաց իջավ՝
ցույց տալով ձայնալարերիս ուժգնությունը,
իմ որովայնի ծալված թևերը,
իմ արյան բջիջների ջղաձգությունը:
Ներսից լուսավորված (սակայն ինձ համար մութ)
ես կանգնել եմ միայնակ ու նայում եմ հեռվից
այլոց պայծառությանը, ովքեր աստղեր են կուլ տվել:

Քարե պատեր

Պատի միջով տեսնելու արվեստ կա:
Ծեր Միշելը տիրապետում էր դրան, քանի որ նա

կրճատեց Բուրենի[1] ճանապարհը: Նա այն մարդն էր,
ում շիտակությունը մեծ պահանջարկ ուներ,

քանզի նա երբեք թեքություն չէր տեսնում, ուղիղ
կառուցում էր
ժայռաբեկորի դեմքը՝ լրիվ հենվելով

տրամաբանության վրա: Նա խոշոր քարերը
այնպիսի հավասարակշռությամբ կտեղադրեր,

որ նրանք կարտացոլեն հեռավոր խթանը՝
հանգավորվելով կրաքարի հետ, էությունն այստեղ

դարձնելով արվեստ: Ես տեսել եմ հասուն
տղամարդկանց,
ովքեր ծաղրում էին խելացի տեղադրված
դոլմենի[2] քարերը.

նրանք ծիծաղում էին անկյունների վրա, որ
երեւակում էին
նրա ռիթմիկ հոգու եղևնաձև շարվածքը,

---

1. Բուրեն - փարածք Իռլանդիայի արևմուտքում՝ Քլեր կոմսությունում

2. դոլմեն - հնագույն դամբարանային կառույց

նրա ջրի թեքության պահպանման գիտությունը:
Սառույցը մի օր կտապալի հապճեպ տեղադրված
գերեզմանաքլուրն այդ: Հասարակ մարդն էլ պետք է
իմանա՝
բացակներն ավելի կարևոր են պատում, քան թե քարը,

նրանք պատուհանի դեր են կատարում:
Տեսարան, մարդիկ: Ոչինչ: Օդ:

Անտառ

Ձմռան կեսերին հաճարենու անտառի մասին հուշերը
սավառնում են ինչ-որ տեղ: Հանց լուսատուներ

ձյան կոտրտված ապակիները լցվում են ակոսները:
Ոչինչ չի ստիպում առաջ շարժվել:

Մենք քայլում ենք սառցե ջրվեժից գոյացած
կոճղերի միջով, ամեն ինչ այստեղ ուղղահայաց է,

բացառությամբ խնամքով պահված վառելափայտի՝
մատիտների նման դարսված մի բացատում:

Ետ նայեցինք ու տեսանք մեր գտնված վայրից
մի հավք է ծղրտում, զգալով մեր բացակայությունը,

բարձր նոտայով, որի ձայնածավալն արագ
ընդլայնվում է,
հեռու հրելով սահմանագիծն այն, որտեղ ավարտվում է

մեր հանած աղմուկը: Այդ ընտիր երգը կարող է գոյել
լոկ այն պատճառով, որ մենք հեռացել ենք:

Բարբարոսի նման ես փչացնում եմ այդ վայրը քարով:
Թռչունը լռության համար է: Ես տան համար եմ:

Կարմիր ուրուրներ Տրեգարոնում*

Նրանք գիտեն որտեղ գտնել ինձ, երբ ուզում են կերակրվել:
Մթնշաղին ես պատրաստվում եմ. գետնին թափում եմ ճարպ

և ձյան մեջ շաղ տալիս կտրտված փորոտիք
կարմիր մանյակի պես: Նրանք գիտեն

ինչպես գտնել ինձ: Նրանք իմ բառերն են,
գեղեցկությունն ու մյուս թռչունները պայքարում են

նրանց հետ,- ներքևում օդի թելերն են, որոնք
նրանց բերում են ինձ մոտ: Նրանք քաշքշում են
փետուրներից,

մարմնից, թափված փորոտիքից ու կոկորդից, որոնք
ես տանը պատրաստել եմ նրանց համար: Տան ներսում

այնքան ցուրտ է, որ կարող եմ նույնիսկ տեսնել իմ շունչը,
տեսնել երեսս ողորկ կաղնու մեջ: Բերանս

քաղցրանում է լռությամբ: Մագիլն ու ճիրանը
հարազատ են ինձ, ճիրանը նույնիսկ

ավելի բարի է, քան մարդը: Եվ այդ անազնիվ բանն են
սիրում ուրուրներն իմ մեջ: Գիշերը ես զգում եմ

նրանց պարզ խոհերը՝ խառնված անապատի
արոսենու ու կաղնու մեջ: Ես շոյում եմ

ծածկոցը, իմ անքուն երկինքը
լցված է աստղերով հանց անզուսպ աչքեր:

**Տրեգարոն - հին քաղաք Ուելսի Սեղերիգիոն մարզում*

Ճգնավորներ

Գիտեմ, որ կարող էի իրոք լավը լինել,
եթե ունենայի իմ լիճն ու ճահիճը
հեռու մնացյալ ճգնավորներից:
Կոլմանն ու նրա արյունոտ զանգերը

ընդհատեցին աղոթքս: Ես կարող եմ տեսնել ծովածոցի
երկայնքով հառնող մոմերը, որոնք վառվում են
ավելի երկար, քան իմը: Դա ինձ դրդում է վայրենի
դառնալ,
այնքան մարդաշատ են օրհնյալ կղզիք այս՝

պատիր սրբերով, ովքեր ուրանում են
մարմինն ավելի դաժան միջոցներով:
Ես ուզում եմ քարի պես անմռունչ լինել:
Ես պահանջում եմ սրբանալ ինքնին:

Քարե շրջան

Գլադուլուսը տխուր է:
Նա կանգնած է հանց մենհիր[1]՝ շփոթահար,
քարաքոսները շապիկի նման ծածկել են նրան:

Նա սգում է դիաբազի[2] մեջ: Նրա անունը
հեգնական է: Երբ նա եկավ, արդեն
ցանված էր սերմը ժամանակի ողորմության մեջ,

նա ուզում էր ծաղկել, գիտեր, որ կարող էր:
Սակայն մոռացել են հին ծածկագիրը՝
կարդալու համար նրա պատմությունը: Նա հանքաշերտ-

քար է: Նա գիտի իր աստղագիտությունը,
թե ինչպես է լույսը թեքվում մռայլ երկնից,
երբ պայթում է ամեհի տեղատարափը: Մարդիկ

անցնում են ենթադրելով, որ նա քնած է:
Նա արհամարհվում է ոչխարներից,
բայց հուզվում է, քանզի սրբազան պատկերն այդ

զորություն ունի հավիտենապես, ինչ էլ որ ասեն
Աստծուն հայհոյող տրակտորները: Խենթը
դեռ լսում է քեզ: Գլադուլուս, հրճվիր:

---

1. Մենհիր - նախնադարյան դարաշրջանի պաշտամունքային հուշակոթող՝ նվիրված նախնյաց հիշատակին:

2. դիաբազ - հրաբխային ապար

Հնաշունչ մորաքույրներ

Երբ Գլեդիսն իր պայուսակը դրեց
կանգուն քարերի կենտրոնում,
պարը սկսվեց: Նա մեկ առ մեկ

դիպչում էր քարերին, լուսնի պես սահում
գրանիտից մինչև սարսեն* գովերգելով
ձեռակերտ հայտնի կառույցներն այս,

սահուն շարժվում էր դեպի պայուսակի Հյուսիսային
Բևեռը,
որ շրթներկի ու նարդոսի հոտ էր արձակում:
Նրա մարգարիտները դառնում էին նրա
արբանյակները,

երբ էլիպսաձև շարժվում էր խավարի ու քաոսի
լուռ աստվածներին կանչելով հրաշքի պարաբոլներով:
Ոչ ոք չի կարող ասել, որ մենք գնացել ենք շների մոտ,

մինչ ժամանակակից մորաքույրները դեռ
ներդաշնակության
մեջ են հին խավարումների հետ, կարող են լիակատար
կատարելագործել անշարժ քարերի ամբողջ
ընտանիքներ:

**Սարսեն - Բրիտանիայում մեծ քանակությամբ հայտնաբերված ավազաքարեր*

Մտքի թանգարանը

I Թանգարանի վարիչը ողջունում է Դոն ալիքը[1]

Ժամը իննին միացնում եմ հեռուստատեսային
Դոն ալիքը.
Հարավային Ուելսի «փոխադրամիջոց» խաղն է,

մեր արխիվի գանձերից մինչև բուն թեման,
(մի պահ) ցուցադրվում են դեպքեր նավաբեկության՝

կետգծերով հանքանյութի ծաղկուն առևտրի
երկար պատմություն ամբողջ աշխարհում,

հետո իմ սիրած դանդաղեցված կաղր ալիքը
ահա ջուր է շնչում փոքրորկի եռուն ժամանակ

ու նավահանգստից դուրս: Եվ ապա անցնում են
բեռնատար մեքենաներին. հրճվում եմ

դիտելով մխոցների վեր ու վար շարժմունքը.
ճշգրտությունը գործը դարձնում է ներդաշնակ,

---

1. Dawn News -ը Պակիստանի 24-ժամյա ուրդու (հնդեվրոպական լեզու) լրատվական ալիքից մեկն է: Կարաչիում տեղակայված կայանը հանդիսանում է Պակիստանի անգլալեզու խոշորագույն մեդիա խումբը:

ինչպես նվագախմբում: Հետո կանգնում եմ
Կամուրջ ձևանմուշին[2] և ըմբռնում մեկեն՝

թանգարանի թանգարանը կենդանի մնալն է:
Հանգիստ, խնդրում եմ, տիկին: Այո, մենք փակվում ենք
ժամը հինգին:

2. Կամուրջ - կառուցվածքային նախագծման ձևանմուշ, որն օգտագործվում է աբստրակցիան և իրականացումը միմյանցից բաժանելու համար, որպեսզի վերջիններս հնարավոր լինի փոփոխել միմյանցից անկախ:

II Պատմության Դաս

Ժամանակ կար՝ նրանք քայլում էին ջրով,
նավանորոգարանները նավերով լեցուն էին:-
Մենք երազում ենք տեսանյութի մեջ նրանց ապրած օրը:

Լի նավամատույցում, ինչպես խաչեր էին ճոճվում կայմերը
խորտակված ամբարտակի հայացքից թաքուն:
Ժամանակ կար՝ նրանք քայլում էին ջրով չոր ու
անխորտակ:

Մարդիկ ստիպված էին ճամփորդել հրշեջի համեստ
ռոճիկով,
նրանք քրտնում էին նենգ փամփուշտներից, իսկ
հարվածները վայելում:
Մենք երազում ենք տեսանյութի մեջ նրանց ապրած օրը:

Մուրմանսկ, Օսակա, Պարագվայ.
այստեղ հանդիպած աղջիկները նրանց հետ են կանչում…
Ժամանակ կար՝ նրանք քայլում էին ջրով չոր ու անվնաս,

ամենուր հանդիպում ուելսցիների և կանգնակների մոտ
Աստծուց մոռացված առվակից քիչ վեր, հավաքվում էին
իրար գլխի:
Մենք երազում ենք տեսանյութի մեջ նրանց ապրած օրը:

Դարձեք տուն՝ Քարդիֆ, լսեք ճոպանի ձայնը հանց քաղցր
նվագ, երբ քամին թեթև դես ու դեն է տանում հուշերդ:
Ժամանակ կար՝ նրանք քայլում էին ջրով:
Մենք երազում ենք տեսանյութի մեջ նրանց ապրած օրը:

III Կայքի ապագան

Չեմ զարմանում, երբ համացանց ենք մտնում՝
ասես սերֆերով ճամփորդում ենք ու տարածվում չորսդին:
Կարիք չկա անսարք շարժիչներ շտկել՝
այլ կաղապարներ, որոնք չգիտեն ինչ է ալիքը:

Եվ եթե չկորչեն հեռուստատեսային ազդանշանները,
այլ առկայծեն միշտ աշխարհի շուրջը, որ մարդկային
մտքում
դրոշմվեն դրանք, ապա, անկասկած, էլ. փոստը թղթից
երկար կգոյի: Արագորեն առաջ, շուտ հետ փաթաթեք

պատմությունը: Թող պրոցեսորները ծառայեն իրենց
մեգաբայթերի թանձր կարմային օդում ծածկագրված:
Կեցցե մկնիկի գնդիկը ողորկ, ստեղնաշարին լավ
տեղադրված
կոճակները, թող՝ ապրեն երկար, նույնիսկ այլեւս
երբ ես չլինեմ:

Այլապես ոչ ոք մեզ չի ասելու, թե որտեղից ենք,
իսկ մենք կկազմենք մեր իսկ սեփական
պատմությունը միշտ՝
հեռու մնալով իմպրովիզացիայից եւ մեր վարկածը
շարադրելուց, ոստիկանության քրոնիկոններից:

Իսկ անձրևի շիթը սրընթաց անցնում է
մոնիտորներով, խոչընդոտում մեր զրույցները թեժ:
Հիշիր ավելի իրական բաներ, քան ինչ հայտնի է:
Անսպասելի ձյունը մեղմորեն թափվում է մեր սրտերի մեջ:

IV Հաղորդակցություն

Ես զանգահարեցի նրան հուշարձանի մոտից՝
ապացուցելու, որ դեռ այնտեղ եմ:
Ես լցված էի երկրպագությամբ՝
գրանիտին, հորիզոնին, հաղորդագրությանը, օդին:

Ես զանգեցի նրան մի սուրբ ջրհորից՝
սպասելով հրաշքների ու ապաքինման:
Իմ աղոթքները խլեցին ինձնից ժամանակ
ու մոմ: Բայց նա ուշադրություն չդարձրեց ինձ:

Ես հավաքեցի նրա դեռ հիշվող հեռախոսահամարը:
Կարիք ունեի ստույգ պատասխանի՝ հուսահատությանս:
Ես ստացա այն. ներեցեք՝ չենք կարող ձեզ միացնել:
Խնդրում եմ փորձեք մի փոքր ուշ:- Այլևս՝ ոչ մի ձայն:

V Հերթապահը

Սկզբում առաջնահերթ գործը՝ Խաչբառը օրվա,
որը լուծում եմ, երբ այցելուներին ցույց եմ
տալիս ճամփան:

Ինձ վճարում են իմ հսկումի տակ գտնվող տաղտկալի
իրադարձությունների ու պոռթկումների համար:

Մենք ուզում ենք լսել մեր աշխատանքի ու տանջանքի
մասին:
Վեցյակը չի լինում *ագռավ փուզի* կողքին:

Ինչը վերահսկեմ, երբ ստիպված լինեմ նորից հեռանալ:
Այս տիղմի մեջ կորած բնակարանները: *Անագրամա**.
քիչ թեթևանալ:

Ճչացող անմիտ մարդու բաց պայուսակ:
Անցողիկ ամպեր: *Տասնիհինգը խիստ ֆանֆրալի է:*

Խաչբառ տվող իմ անանուն ընկերը
թաքնված բանականությանս բանալի է տալիս:

Սրանք օձեր են, որոնց չես հետևի կամ էլ՝ սանդուղքներ,
որոնք չես ելնի: Վերջին խոսքը դարձյալ *Ժամանակն է:*

**Անագրամա, շրջագրում - գրական հնարանք, փվյալ բառի հնչյունների կրկնություն, վերադասավորություն ուրիշ կամ էլ մի շարք բառերի մեջ մի բառից ուրիշ նոր բառ ստեղծելու նպատակով:*

VI Գիշերային պատկերասրահներ

Գուցե այսօր նրանք փոխեն ժապավենը.
միշտ միեւնույն հին պատմություններն են. նախ, մշուշ էր
խիտ, ապա՝ ճնշվածություն, հետո զարգացող դեպք -
այնքան անփոփոխ պատմություններ, բայց ինձ
թույլ չեն տալիս պատմել: Գիշերները տենչում եմ

այս պատկերասրահները հերթականորեն: Մենք
բացում ենք էկրանները
ցուցադրելու նոր նմուշներ: Լավագույնն իմ սիրտն է
ապակե տուփի մեջ, և այն միանում
ու անջատվում է լամպի պես: Այս հատուկ
սենյակը լուսավորված է, մի արվեստի գործ: Կանգ առ,
սկսիր: Կանգ առ, սկսիր:
Կանգ առ, սկսիր:

Խամրած ափ

(Նորա Նոլանին)

Անգամ մեկնելուց առաջ ես կարոտում եմ
այս վայրը: Մինչ անձրև խշշացող չորացած խոտը,
քառատողի նմանվող նրա շեղջերը, գրավիչ ձկնկուլները,
որոնք ունեն մետաղյա աչքեր և սուզվում են կարթի նման,
հետո ամրացնում կորացած մարմնի իրանակապը,
որ արձակվել է կարիգենի* այգիներում:
Ես քայլում եմ այն կանանց հետ, ովքեր քար են նետում
ալեկոծությունների
եւ իրենց խնդիրների վրա, ովքեր չեն պատասխանում
զանգերին
հեռախոսի կրպակներում: Նայիր: Ամպերից
կախված են մետաղե հրվանդաններ, երկար
ծովախորշեր,
որոնց անալիք, խաղաղված ափերը
ստիպում են հիշել ու կարոտել տունը, որտեղ ես չեմ եղել:
Սնդիկե հրվանդանները կրակում են գիշերվա վրա
մինչև լուսաբաց և պողպատապատում մեռնող օրվա
ձանձրույթն ու խրուկաներկը, դեպի խավար քշելով
փչող քամին, ապա՝ տեսադաշտից անդին:

---

* *կարիգեն՝ գեղեցիկ, ձեւավորված այգի*

Պոետի խոստովանությունը

‹‹Ես արեցի դա: Ես սպանեցի իմ մայրենի լեզուն:
Ես չպետք է թողնեի նրան
մեն-մենակ:
Իմ ցանկությունը ընդամենը մի փոքր զվարճանք էր
ուրիշ մարմնի հետ:
Իսկ հիմա, երբ նա հեռացել է,
սարսափելի լռություն է տիրում:
Նա շատ լարված էր,
հավանաբար խանդից:
Ի վերջո, ես երիտասարդ եմ,
իսկ նա՝ գեղեցկուհին,
դարձել է ջադու՝
չնայած բոլոր վիրահատություններին:
Կարո՞ղ էի նրան փրկել,
ստիպել նրան զգալ՝ ինչպես տանը:
Առանց հանդիմանության:
Ես դառնում եմ անզգա,
կաշկանդված, երբ մտածում էի…
Ասա իմ փաստաբանին, որ գա:
Մինչ նա ինձ հետ է,
ես մայր ունեմ››:

Ի՞նչ է անունը

Այսօր խաղտտնիկը[1] ի վերջո մոռացավ,
որ մի ժամանակ նրան անվանում էի sigl-di-gwt:

Նա չէր տալիս պղնձագործի մետաղադրամը,
նա այն կտուցով պահում էր գետափի մամուռում,

(mwswgl-ն այլևս) չի անհանգստանում, հավանաբար
այն պատճառով, որ նրա սովորույթների մասին շատ քիչ

ենք տեղեկացված: Կաչաղակների վախը մարդկանցից
սկսեց նվազել, քանի որ մենք կորցրել ենք

(ճղարտ[2] բառի) իմաստը և հետևում ենք
ահաբեկիչ թռչուններին աչալրջորեն:

Lleian wen-ը նույն ինքը «բադը» չէ,
որովհետև նա պատկանում է այլ տեսակի,

մի այլ թռչուն է: Տեղի ունեցավ վաճառահավաք.
gwylan-ին տարան, իսկ մեզ թողեցին «որորի» հետ,

և կոպիտ իմաստները մինչև այն օրը, երբ
«ծիծեռնակ»-ը հնչում էր gwennol, չներկայացան:

---

1. խաղտտնիկ - ճնճղուկազգիների կարգի թռչուն
2. ճղարտ - կաչաղակ

Այց ագարակ

Յուրաքանչյուր կովն իր մազերի ոճն ունի
և քայլում է բարձր կրունկներով,
կրում է ցանցավոր ձեռքի պայուսակ,
որտեղ պահում է իր ծամած մաստակը:

Նրանք լիզում են իրենց ռունգերը
թքառատ լեզվով:
«Ձեզ դո՞ւր եկավ սա, խուզարկու: Երբեք մի թեքվեք
կովից կամ մի կարծեք, թե նա հնազանդ է:

Մայրս մի անգամ ոտնահարվել է,
նրան քաշել, ազատել է
նախրապանը»: Կոդակի դաշտը
հանկարծ լցվեց

սև ու սպիտակ նշաններով հոլանդական կովերով,
ասես, քարեր լինեն
մեր շուրջ կանգնած, նրանց սիլոսահոտ շունչը
հաճելի էր, ճնշող: «Քույրդ խոստովանեց…»

«Այս գյուղն արդեն մահացել է:
Մի պրիոն*, պրն. խուզարկու, սպանեց առևտուրը
մսագործի, ով ուներ իր սիրած դանակը,
սննդացանկը: Լեզուն: Ապրելակերպը»:

**պրիոններ - ախտածիններերի հատուկ դաս, որոնք կազմված են անոմալ երրորդային կառուցվածքով սպիտակուցներից և չեն պարունակում նուկլեինաթթուներ:*

Հանկարծ մի անհանգիստ կով, փախուստի մատնվելով,
զայրացած հարձակվեց
մեզ վրա: Գյուղացին, բղավելով, ոլորահատ սղոցով
կտրեց երինջի ականջը,

և, կոպտորեն բռնելով ձեռքս,
ցույց տվեց՝ ինչպես ապահովել դիրքը:
Մենք նախրապանի հետ երաժշտական արձաններ
խաղացինք.
ամեն անգամ սառեցվում էր նրա արտասանած
յուրաքանչյուր բառ:

Տնական ճաշ

«Ես կարծում էի, որ նա կախարդական էր:
Ժամանակի պես
բարձրացանք լեռները՝ սեւ բանջարեղեն
հավաքելու: Ես ճկույթի ու բթամատի միջով
զգուշորեն գլորեցի պտուղը՝ հիացած կեղեւով,
որը ստիպել է տեսնել՝ ինչպես են անօրգանական
հատապտուղները քրտնել լեռնային
դառը մահճից: Ես լսեցի մի կանչ՝

մայրս էր, նա հուսով էր՝ մեզ կրկին տեսնել
տանը: Մենք ling-di-long էինք,
կանգ առանք քարհանքի մոտ քարեր նետելու…
Երբ ներս մտանք, սառեցված մսի կտորի վրա կար
գոլորշի արձակող երկու կարկանդակ, լվացքը
վերջացած էր:
Ես ապշած էի և անզոր էի պատկերացնելու՝
ինչպես անցավ նրա ժամանակը: «Կարճ կապիր»,-

ասացին նրանք ինձ: Բայց վերելքն էր
միակ իրական պատասխանը: Այնժամ ես իմացա,
որ մայրերը միշտ չէ, որ ապրում են շիտակ կյանքով:
Նրա աշխարհը կնճռոտված էր, նա ուներ արագության,
քաղցրության ու ստախոսելու ընդունակություն:
Իմ հավատքի անկեղծությունը խաթարվեց:
Ես միշտ հնձողն էի՝ հետևիս երկար ճանապարհ»:

Փոքրիկ հողամաս

Բլուրների կատարներին ու քարակույտին սիրուն
հասունանում է վերջին ցերեկը: Ժամանակն է, որ նա
ձևավորի պապիս հաճարենու նորատունկ անտառակը,
հյուսի ծառերին՝ ընդդեմ տեղատարափ անձրևների:
«Ես գյուղ չեմ վերադարձել կրկին՝

համերգի գիշերվանից ի վեր: Ես մնացել եմ
ինքս ինձ հետ: Ես հասկանում եմ, որ դու լսել ես
խոշոր կատուների արած ոչխարների որսի լուրը:
Քննիր մահացածների սպանությունն
ու գազանի որսը մտքիդ խորքերում»:

«Հայրս հեռու էր…»

«Տանը մշտապես բախվելով ձմռան՝
նա իր ուշադրությունը, սիրո մեծ մասը թողնում էր
դրսում, մոտը պահում էր ամենօրյա Եղանակի գիրք՝
հավատալու համար, որ ամեն բան դեռեւս շարժունակ է,
հուսահատությունը կարելի է փոխել: Նրա
Դիտողությունները

վկայում են, որ նա խոնավության գիտակ է.
ես ամիսներով այնքան եմ ճանճրանում, որ
տարակուսում եմ
«Արդարություն բայց բավականին խեղդուկ E-ի մեջ»
և «սառը ցնցուղ»՝ ընդգծված կարմիրով ծածկագրի վրա:
Ամենակարևորը. «Ուժեղ անձրև Cwmdu-ում,

մեծ վնաս է հասցվել»: Պարզ է.
թեթև, ապա ավելի մեղմ, հետո ուժեղ քամի,
հուլիս ամսին մի շաբաթ «շատ ՊԱՅԾԱՌ»:
Դրանից հետո մի քանի օր առանց
մեկնաբանությունների:
Նա շնացող էր լույսի շողով»:

Անցյալ

Մի նայիր: Բայց տեսնում ես սարն այդ:
Ես հաճախ եմ նրա հետ այնտեղ սիրախաղ ունեցել:
Այժմ մենք միայն ընկերներ ենք,
բայց, Աստված իմ, որքան էի սիրում նրան,

որքան խանդավառ օրեր ենք
անցկացրել թաքստոցներում,
թափառել ենք, քրտնել:
Նա սիրում էր ինձ, երբ մենակ էի,

նա չէր հանդուրժում ընկերական միջավայրը
(խանդոտ լեռ էր):
Ընկերներով մի անգամ գնացինք
նրան տեսնելու, նա չընդունեց եւ ինձ,

շրջվեց դեպի իր Բ ճանապարհը՝
թաքնվելով մեզնից:
Մենք վերջացրինք մեր աշխատանքը
գյուղի ջրամբարում: Ի՜նչ աղջիկ էր:

Նրա վերջը

«Վերջը սարսափելի էր: Ամբարտակի ներսից պայթյուն
եղավ, ամենուր արյան հետքեր էին: Նրա բերանից
բառեր էին հոսում, da yw dant
i atal tafod[1], gogoniannau'r[2] Tad
կարմիր ծաղիկների մեջ - yn Abercuawg
yd ganant gogau[3] - արյունը սև էր,
լի կեղտով, ջրամբար, որ զարմացած էր
իր վառ դարձվածքներով - bola'n holi ble mae 'ngheg[4] -
և առատությամբ, yes no pwdin llo[5],
և սաղմոսները հավաքվում էին նրա ուռած մարմնում
և հորդում բերնից, ասացվածքներ, նորաստեղծ բառեր,
բույսերի անվանումներ, յոթ տեսակի մոծակ,
ճպուռ, հազրեվարդ, մասրենի,
ապա գարշելի թարախ և վաղուց կորցրած պայմաններ
հանց gwelltor ու rhychor[6], նրա փսխումը հեռացնում է
նրան ճանապարհից, մի ուժ
թողնում է նրա շնչառության բերդը,
gwyr a aeth Gatrneth[7]:

---

1. da yw danti atal tafod – ապրամը լավ արգելք է լեզվի համար

2. gogoniannau'r Tad – Հոր հաղթանակները

3. yn Abercuawg yd ganant gogau – կկվի երգը «Abercuawg» պոեմում (9-րդ դար)

4. bola'n holi ble mae 'ngheg – ապամոքաս հարցնում է, թե որտեղ է իմ բերանը

5. yes no pwdin llo – այո, ոչ, հորթի պուդինգ (նկատի ունենալով նոր ծննդաբերած կովի առաջ կաթը)

6. gwelltor rhychor – աջակողմյա ու ձախակողմյա եզներ վարելա-կարգում

7. gwyr a aeth Gatrneth – մարդիկ գնացել են Կատրաեթ (6-րդ դարի բանաստեղծ Անեիրինի «Y Gododdin» պոեմից)

Ճգնաժամից հետո ոչինչ չի մնում անելու, բացի նայելուց՝
ինչպես է նա մեռնում, թուքն ու քրտինքը բառերի հետ
մեկտեղ
դուրս են թափվում մրջյունների պես. padell pen-glin[8],
Anghydffurfiaeth[9], clefyd y paill[10],
և, չնայած մեր ջանքերին, գորշ այգաբացին
արյունահոսությունը դադարեց, նրա շրթունքներն
անգույն էին,
վերջին կաթիլն ընկավ: Նա մահացավ»:

8. padell pen-glin – ծնկապանակ
9. Anghydffurfiaeth – այլախոհություն
10. clefyd y pail – լեռնդ

Աֆազիա*

Ես «մուրճ» խնդրեցի, բայց սխալմամբ «բահ» տվեցին,
«թեյ» խնդրեցի, իսկ պատվերում «նարնջի հյութ»
գրեցին:

Ես նշեցի «թավիշ», բայց ինձ տվածը «մետաքս» էր,
նրա նույնիսկ գույնը սրտովս չէր,

բայց վերցրի այն՝ ձևանալով ճիշտ է: Մեկը կտրում է թելը՝
իմ յուրաքանչյուր բառն ու նրան համարժեք իրը կապող,

ուստի՝ իմ միտքը անտիկվար խանութ է, ուր ես եղել եմ:
Հիմա այլեւս չեմ իմանա, թե իրականում ինչ
նկատի ունեմ:

---

*Աֆազիա – խոսելու ընդունակության լրիվ կամ մասնակի կորուստ

Հոգեկան ցնցում

Ինչ կլիներ, եթե այս երեկո քնեի Թալիեսինի*
քարի կողքին՝
սպանությունը պարզելու համար: Այն ինձ
խելագարության կհասցնի,
թե՞ բանաստեղծ կդարձնի: Սա պետք է վերանորոգվի

օրեցօր՝ այս ճախճախուտը, քանզի քանդվում է
ամեն անգամ, երբ լքում ենք այն: Տես՝ ճոճվում է
քամուց, տապալում զվարճալի արտույտներին

բարձր սյուներից: Նրանք ընկնում են նաեւ
համր ու անաղմուկ: Ես կարիք ունեմ իմանալու՝
ինչն է գոյատևում մոռացվելով: Ստվերը

մեծանում է այստեղ, բայց նրա բերքը չի հավաքվում:
Սարալանջը տհաճ հոտ է սփռում: Կարող էի աղոթել՝
հանդիպելու խառնաշփոթ այս եռանդի հետ,

նախքան նրա գուբն ընկնելը,- հետո հեղեղներն իջնում են
հովիտ, մտնում ընտանի կենդանիների, անունների,
ամուսնությունների, սպանությունների ու ժամանակի մեջ:

Մոռացիր մոռացվածը: Կդիմակայեմ
քարաքոսներին ֆշշացող ջրափոշու նման,
և ներքևում գտնվող՝ ինձ զիջող լեռան ալիքին:

---

*Թալիեսին – Բրիտանացի բանաստեղծ (6-րդ դար)

Կյանքի փրկություն հոգեբույժների մոտ

Իհարկե, սարսափելի է: Ըստ երևույթին՝ ընկածն
ունի կարիք
իրեն հասկանալու, որը մահացու է: Տիրել մարդուն,
կիրառել քայքայման տարբեր միջոցներ չոր հողի վրա.

ծունկը պինդ դնել նրա աճուկին,
ձեռքերն օգտագործել կոկորդի համար,
սեղմել ակնագնդերը բթամատներով

մինչև կարողանաս տիրել նրան: Դա նման է սիրախաղի
կամ տանգոյի: Ձեռքը վեր պահած,
ջրի մեջ կորած՝ գեղեցիկ է և հիշեցնում է

բարեկիրթ դիտորդ Բեատրիսին
ու լրջմիտ Դանթեին, ով ծովով մեկնում է Դրախտ
լողունակ ու հեշտ: Դեմ առ դեմ՝

խեղված մարդու հետ. երբեք մի խոստացիր,
որ կարող ես փրկել:
Դա կախված է լոկ մի պարզ համբույրից:

Խորհրդատու

Ես այն մեկն եմ, ով ստիպում է արձաններին շարժվել,
ով մեռելներին սովորեցնում է բարձրանալ ու սիրել

կրկին, ավելի իմաստալից: Ես օգնում եմ
դատապարտվածներին
քննել կատարվածը, նրանց, ովքեր դատապարտել են

նրանցից յուրաքանչյուրին դժոխքի:
Այո, ես կողմ եմ հաբեր օգտագործելուն,

բայց իմ հիմնական գործը ցավը թարգմանելն է
հեքիաթի լեզվով, մի այլ լեզվով, որ նրանք

կարող են ընդունել: Մենք ունենք հաճելի տեսակետներ:
Կցանկանա՞ք ինձ հետ գալ իմ մթնոլորտը:

Բաժանում

ԴԵՊՔԻ ԺԱՊԱՎԵՆ

Օրիորդ Դ

«Տաղավարում
անձրևի փոքրիկ ձեռքերը
Բրայլի լեզվով թակում են պատուհանները:
Ես չեմ հասկանում.
ինչ-որ մեկը սպանվել է այստեղ,
բայց ոչ ոք բառ իսկ չի արտաբերում:
Ես հետևում եմ, թե ինչպես են
հիվանդները բոուլինգ խաղում
գլորում փայտե մոլորակները
հառաչող ծառերի տակ:
Այն դիակը, որ նշեցի
կարծում եմ ես եմ»:

Վաղ օրեր հոգեբուժարանում

Մինչ ժամանակակից դեղամիջոցները
հիվանդները սառեցվում էին քանդակների պես,
դատապարտվում տանջանքի սեղանին հանց յոթ
մահացու մեղք գործած մահկանացու: Ոմանց
արձակեցինք

լիթիումով (Հիշո՞ւմ եք Ղովտի կնոջը.
նրա աղը օգնում էր ծանր հիվանդներին):
Նույնիսկ էլեկտրաշոկային դաժան թերապիան
հրաշքի էր նման: Գեղջկական կյանքը

մղձավանջ էր: Մենք գտանք
երեխաների, ովքեր մնում էին հավաքներում,
օրորվում աքաղաղի պես անուշադրության մատնված
ու խենթացած: Կիսամեռ մի տղա

շղթայված էր շան պես: Չնայած ազատեցինք
նրա մարմինը, մենք անզորացանք դիպչել այն վախին,
որով համակված էր՝ ուժեղ, աներեւույթ՝
յուրահատուկ այդ գարշահոտ գյուղին: Մենք
լսեցինք նաև

շշուկներ անսիրտ արնապղծության մասին և
հաճախ էինք
պատուհաններից տեսնում՝ ինչպես է լուսինը շտապում
անհետ չքվել:
Բայց ես իմացել եմ նրանց գաղտնի ծածկագիրը,-
լսել եմ ցանկապատերին եւ գրել փշերով:

Գտնելով մարմինները

ԲԱՂՁԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Օրիորդ Դ

Անցած գիշեր ես փխրեցրել եմ հորս բանջարանոցը
Բրիջ փողոցում, հին ճոճանակի մոտ:
«Այն միշտ պետք է փորել վերջ ի վերջո,
սակայն ամեն անգամ հետաձգում էի»,-
ասացի ինքս ինձ: Մեռածներին,
ոչ, սպանվածներին վրան է հատկացվում,
որտեղ ամփոփում են նրանց մարմինները՝ պաշտոնական
հարցումների մեկնարկից առաջ: Ես նշել եմ, որ
պատմեմ հոգեբանին հողամասի առթիվ ձախից աջ
սրընթաց անցնող ստորգետնյա հոսանքի մասին:
«Մենք այնտեղից ծնեբեկ կքաղենք», - մտածեցի ես:

Լեզվի ֆետիշիստ

Այս տարի մեր մասնավոր կլինիկայում
ունեինք երկու Քրիստոս. մեկը Հիտլերն էր,
մյուսը՝ Աստծվածամայրը: Ես ժամանակս ծախսում էի
լսելով նրանց, պարզաբանումներ կատարում, ընդգծում
միտք խթանող ցանկացած բանաստեղծություն,

որը կարող է վերահսկել իմ բանականությունը:
Գիտակցությունը գրեթե միշտ հետևում է ձայնին.
ես դա հասկացել եմ: Ես տիրապետում եմ
վեց լեզվի, ուստի՝ լուռ մնալու
տարբերակ չկար, բայց ես հրեշ եմ…

Գիրքն այդ Լեզվի իմ Ատլասն է, որ
ցույց է տալիս բերանի հիվանդությունները,
բորբոսներն ու ուռուցքները՝ ինչպես հոգ տանել
այդ մարմնի մասին, որպեսզի խոսի: Քոնը, սիրելիս,
ուշագրավ է: Մոտ արի: Ասա՝ աաա՜…

Պատանու խենթություն

ԴԵՊՔԻ ԺԱՊԱՎԵՆ

Օրիորդ Դ

Զարմանալի մի օր չարդախի հետևում
ընկերացա ոմն «Էնգլիի» հետ:

«Ուելսցիների» պես նրանք ևս խաղում էին
ռելսուղու վրա,
հաշվում ածխատար գնացքները,

մինչև գլուխներս կկորցնեինք: Հետո պոկեցինք
կպչուն ցախկեռասու ծաղկատերևներ,

և նա ինձ ցույց տվեց, թե ինչպես կսմթել
ու քաշել նուրբ ծաղկի առէջները

և նեկտարը կաթեցնել լեզվի վրա՝
համտեսելով նրա քաղցրությունը: Ամեն ինչ փչացավ

մի օր, առանց պատճառի, զուգարաններում,
երբ խաղն ավարտվեց ինձ դավաճանության մեջ

մեղադրելով: Ես չէի պատրաստվում արդարանալ,
քանզի պատերն էլ էին ինձ զրպարտում: Ես կրակից

զգացի համը ժանգի, քանզի գիտեի՝
դա անձնական չէր, այլ բանալին էր

մի այլ թակարդի, որ մնացել էր իմ կոկորդում՝
սպասելով, թե երբ կբռնեն ինձ: Ուստի մնացի

աչքերս չռած, չնայած վնասված էր տեսողությունս,
և ես դիտում էի՝ ինչպես էի մահանում իմ մարդասպանի

մթին աչքերում, զարմացած վախից: Դա այնքան տևեց,
մինչև մոնոգլոտ աղջիկը ստիպված բաց թողեց ինձ,

քանի որ նրա նյարդերը մեկեն տեղի տվեցին: Թեկուզ
մեռածի պես՝
ես այն մեկն էի, ով շտապում էր դեպի բարձունք:

Թերապիա

Դուք լսել եք այն միակ հոգեբանի մասին, ով թույլ է տվել
օբսեսիվ-կոմպուլսիվ խանգարում ունեցողներին մաքրել
իր տունը,
ասես նրանց հիվանդությունները իրենն էին:
Նրանք լավ խնամատարի դեր էին տանում. ողջ գիշեր
նրանք չէին քնում,
բաց ու խուփ էին անում դռան փականները,
տանը գործում էին հանց պոլտերգեյսթներ[1]:

Նա հոգեկան հիվանդներից դրամատիկական
խումբ կազմեց, ովքեր իրենց պատմուճաններում
ռումբ էին պահում, մինչ կպայթեցնեին դահլիճը:
Ճնշված մարդիկ միշտ մեկուսացվում են,
ուստի նա ստուգել է նրանց հեռադիտակով
և տեղավորել ըստ հայտնի դասական նենգությունների

և, իհարկե, նրանք հազիվ թե երբևիցե շարժվեն,
մանավանդ, երբ եղածին գումարվեց որոշակի ոճ:
Նա ձայնագրեց Տուրետի համախտանիշով հիվանդների
հնչյունները
եւ վաճառեց դրանք փոփ խմբերին որպես նվագակցում:
Նա սեր էր սերմանում անձնակազմի ու հիվանդների
միջև:

---

1. Պոլտերգեյսթ - Երևույթների պարածված անվանում, որոնք վերագրվում են միստիկ և պարանորմալ բնությանը: Պոլտերգեյսթի գործողությունները բնութագրվում են կողմնակի աղմուկով (թակոց, քայլեր), առարկաների անհետացմամբ, ինքնուրույն տեղափոխությամբ կամ բոցավառմամբ:

Նա ձիրք ուներ ցնորամիտների հետ աշխատելու,

որոնց համար նա գնումներ էր կատարում
իր բոլոր խնջույքների համար, նա տալիս էր տարոտի
քարտերը

շիզոիդներին, որ նրանք գուշակեն իրենց բախտը:
Հավանաբար նա խառնվել է այլ մարդկանց ցավերին,
եւ նրա հիվանդները սիրում էին նրան և նրա հույսն էր
երկու կամ երեք խելագարներից ստանալ գոնե մեկ
իմաստուն:

Խոստումնալից առաջընթաց

ԴԵՊՔԻ ԺԱՊԱՎԵՆ

Օրիորդ Դ

«Դուք ճիշտ եք, ես չեմ հիշի ձուն,
եթե այն չկոտրվեր: Երբ դեռ անվնաս էր
ճիշտ բառի պես, այն ամբողջությամբ տեղավորում էր
իմ ափի մեջ,
երբ վեց տարեկան էի. երկարավուն, փոքր-ինչ տաք
նվեր մորս համար: Ես հիշում եմ հրոցը
կապույտ դրախտավարդի պես. երբ կծեցի լեզուս,
մարմնովս մեկ սաստիկ ցավ զգացի, լոկ ձեռքերս չզգացի
պաշտպանվելու համար: Ճունը
եկավ լիզելու գարշելի դեղնուցը,
որ դուրս էր սահում մատներիցս՝ կճեպի հանց
սղոցված խճապատկերից, ահաբեկող-լպրծուն
սոսնձի պես»:
Երկար դադար: «Կարծես ես էի կոտրվել, քանզի
իմ ողջ ուշադրությունը չկարողացավ
փրկել իմ միակ գանձը»: Երկարատև պոռթկում:
«Ձուն ոչ միշտ է նշանակում նախասիրություն:
Այն մնում է ձու, երբ ընդհանուր ճաշ է»:
«Աստված իմ: Ինձ ասա: Մի՞թե այս կյանքի
իմաստազրկումը
հիմնված էր սխալ թարգմանության վրա»: «Լիովին
հնարավոր է»:

Տարածեք մի քիչ երջանկություն

Այժմ, երբ միլիոնավոր մարդիկ դեղահաբեր են ընդունում և պրոզակ[1] են միզում, իշխան ձկները շատ ավելի հյութեղ են, իսկ գետերը հոսում են քիմիական երջանկությամբ: Իմ նվերը մոծակներին «սառը գլխի» պոռթկումն է, որն ուղղակի մահվան նման վերջ է դնում անվերջ խնդիրներին: Մոզգի, հարվածիր հակադեպրեսանտ որպես: Խորհուրդ եմ տալիս:

1. պրոզակ – հակադեպրեսանտ

Ուշագնացության տաղանդ

ԴԵՊՔԻ ԺԱՊԱՎԵՆ

Օրիորդ Դ

«Առաջին անգամ, երբ ես ուշաթափվեցի, ուղղակի ստեցի
հարևանությամբ ապրող տղային, ով եկել էր խաղալու:
Ես ասացի, որ իմ անունը Ջեննի է:
Բայց դա ճիշտ չէր: Ես տեսա մի թռչուն, որ
մրջյուններ էր ուտում: Անհեթեթ է հնչում՝
ես ընկա գետնին: Նրանք ինձ դեղեր տվեցին,
բայց դա չկանգնեցրեց ինձ, ես կարող էի ընկնել
ցանկության
դեպքում, ընկնել նազանքով, և դա ավարտվում էր ինչ-որ
հաճոյակատարի գլխին փռվելով: Մի մարդ կար,
ով ասում էր, թե ամուսնացած է ինձ հետ և վաղուց
քնում է
իմ անկողնում: Ես չէի հիշում ոչ մի
հարսանիք, բայց նա միշտ բարի էր
և լավ բռնում էր ինձ: Որտեղ էի գնում,
երբ գիտակցությունս լքում էր ուղեղս:
Արդյո՞ք ուշաթափություն չէր: Իսկ ինձ թվում էր՝ ես
բավականին
ծեր եմ մի համեստ կնոջ համար, ով հազիվ է ապրել մեկ
շաբաթ իր ողջ
քսանվեց տարում: Բժիշկ, որքան համարձակորեն եք
դուք ենթադրում, որ դա ընդամենը վախի զգացում է:
Դա շատ ավելի արտակարգ բան է,
քան սովորական վախը: Արագ կանչեք այստեղ
ուժեղ մեկին: Ես պատրաստվում եմ ընկնել...»

Հոգեբույժ Տվիտչեր

Բառերը միշտ վերադառնում են հանցանքի բեմը:
Նրանք ունեն յուր օրինական կարծիքը:
Իսկ ես ունեմ իմը:

Պետք է համբերատար լինել, քանզի խոսքը կարող է
ամաչեցնել,
այն չի գալիս, որովհետև դու աղմկահարույց ես
կամ չի ասում՝ ինչու է եկել:

Ես օգտագործում եմ իմ լռությունը թաքնված խաքիում,
չգայթակղելու համար վայրի բնությունը:
Ես թեյը պատրաստում եմ իմ ներսում,

ունեմ սիրած դասագրքերի ցանկ, հույս բացառիկի
համար,
այնպես որ կարող եմ նշան դնել և
հստակ ապացուցել, որ դա գոյական է:

Երբեմն հեռադիտակով աչքի փայլ եմ որսում
և զգում այն
ներսում:

Այս ինչ ներկայություն է, որ այսքան հանդգնորեն է
հետապնդում
նույնիսկ ինձ՝ բժշկիս:
Ամենավտանգավոր դեպքը իմ կյանքում:

Հարց

ԴԵՊՔԻ ԺԱՊԱՎԵՆ

Օրիորդ Դ

«Բժիշկ, Ձեր կարծիքով՝ Դուք կարո՞ղ եք կորցնել
ձեր հոգին»,-
մի անգամ հարցրեց ինձ օրիորդ Դ-ն: Փորձեցի մնալ
անտարբեր,
բայց հարցը ցնցեց ինձ: «Ես երազում էի դժոխքում լինել,-
շարունակեց հիվանդը՝ անտեսելով սարսափն
իմ դեմքի,- չնայած ես մեռել էի, մարմինս
ապրում էր, չէր կարողանում անհետանալ
ապրողների կյանքից: Ինձ սիրողները մի օր
երկատեցին օրգաններս, չիմանալով,
որ նրանք կործանում են մարմինս փողոցում քայլելիս:
Մի պահ ես ինձ կեղտաջուր զգացի, հետո
ցայտալով, արտահոսելով դարձա տիղմ,
ցանցառ մի մոլեկուլ, բայց չէի կորցնում
գիտակցությունս: Ես զգում էի ամեն ինչ.
ամբողջ աշխարհը պղծությունից բացի ոչինչ չի
ճաշակում,
ես մարմնապես պիղծ էի, ես դա զգում էի
իմ էության ամեն աննշան մասնիկում:
Ես նույնպես խոշտանգող էի, որովհետև մեղավորները
ստիպված էին խոշտանգել ուրիշներին: Ինձ
ընձեռնեցին
«մեղմ պարտականություններ»՝ այնքան հարվածել
կենդանի ոսկորներին,
մինչև ցավեն նրանք, սակայն չխոցվեն
վերջնականապես»,-

ասել է ինձ Որակի վերահսկիչը: «Ռոդենի Դժոխքի
Դարպասներն այնտեղ էին՝ արնածածկ ու սառած,
եւ դու պետք է նայեիր դրանց: Ու դեռ ավելին…»:
«Բժիշկ,- հարցրեց նա կրկին,- Դուք կարո՞ղ եք կորցնել
ձեր հոգին»:

Ես կրոնական չեմ: Նրա հուսահատությունը
վախեցնում էր ինձ: Ես չէի համարձակվում
ասել «Այո»: Բայց իմանալով այն, ինչ հիմա գիտեմ,
ես կցանկանայի Աստծուն «Ոչ» չասել:

Խուճապի գրոհը

Դու ընկղմվեցիր սառույցի մեջ: Քո գլխավերևով մարդիկ
շրջում են այս ու այն կողմ, փորձում հասնել

այդ փշրված գմբեթով ցուրտ տաճարին:
Դու սառույցում՝ ասես դիմանկարդ անշունչ

տեղադրված լինի սառույցի մեջ:
Լույսը չի օգնի: Անվտանգությունը ներքևում է,

քիչ ավելի խոր, իսկ դու նայիր վերև՝
դեպի ժանեղ մութը: Այնտեղ կա օդ,

գոռոց, շան հաչոց, տաք ձեռքեր ու պարան:
Հասիր խավարին: Դա քո միակ հույսն է:

Ծովափնյա առողջարան

Ես ապրում եմ հեռու
իմ սեփական կյանքից՝
իսկական գավառաբնակ: Այդ ուշացումը
ինձ վրա թանկ նստեց:

Շները խելահեղ որոնում են ալիքը
հետ պահող թելերը, որոնք պետք է արձակել:
Նրանք երբեք չեն գտնի դրանք:

Օվկիանոսը տաղտկանք է
իր շրջանաձև շնչով: Թեթևորեն
ներս է կլանում ամեն ինչ
և բերանբորբով ճչում՝ «Ծղրիդ, դռնակ»,
ճչում երկու անգամ:

«Սկսիր ապրել»,- ասում են նրանք:
Բայց ես չգիտեմ ինչպես:
Կյանքն իմ խնջույք է
մեկ այլ սենյակում,
որին հրավիրված չեմ:
Ինձ դուր է գալիս իմ իսկ թախիծը:

Բուժքույրերը հորդորում են
քայլել դրսում:
Իսկ ես գերադասում եմ
իմ գլխի երկինքները.

«Նրանք բոլորը սաստիկ կափսոսան,
եթե ինձ մի օր մեռած գտնեն»:

Գիշերային երթուղի դեպի Նանքաքետ

Այդ օրերին գիշերային լաստանավերն ուղևորվում էին
կուրորեն
և մի անգամ, Նանքաքետի արգելքն անցնելու համար,
նրանք օգտագործեցին միակ լուսարձակը
հայտնաբերելու խութանշանը
և մոտակա ջրանցքը: Ես նստած էի դրսում և
հետևում էի՝ ինչպես էր լույսն օրորվում, ասես նա զգում էր
նավահանգստի արկղերն ու աջակողմյա կոները,
և բացատրում լեռնուղին Բրեյլի գրերով:

Իմ հիվանդները շոշափում են յուրաքանչյուր բառ:
Ես հրաժարվում եմ լուսարձակից, նստում ձեռքերիս,
քանի որ
նրանք շարժվում են դեպի ամենավտանգավոր
ժամանակները:
Ես պետք է հանգիստ մնամ: Նրանք պետք է վարժվեն
չվստահել մեքենայի լուսարձակներին և, որ իջնող աստղը
ինքնաթիռ է: Նրանց անհրաժեշտ են նոր նշաններ
ինքնակողմնորոշման համար, իմանալու որտեղ են
գտնվում հիմա:

Կատարյալ հանցագործություն

Նա սպանեց Նեին տասնհինգ տարի առաջ,
կատարյալ սպանություն Նեի իսկ ձեռքերով:
«Ահա ինչ վերջ պետք է ունենար Նեն», - ակնարկեց նա:-
Այս բանաստեղծությունը հանգավոր չէ, բայց իրական է:

Դա հոգու սպանություն էր: Նրա ինքնարդարացումն
անթափանց էր, նա արդեն մեռած էր.
մատնահետքեր չէր թողել, բայց ստեր՝ լիքը.
Նեն ուզում էր սոսկ հանգավորվել նրա հետ:

Ձգձգված արձագանքը տարիներ է խլել՝
իմանալու Նեի մտադրությունը, իսկ նա դեն է նետել
Նեի ոտքերի տակ գտնվող ողջ հողը:-
Այս բանաստեղծությունն իրական չէ, բայց հանգավոր է:

Հետո նա հասկացավ, որ ինքնություն չունի,
քանի որ կախված էր Նեի «ինքնությունից»,
իսկ նա արդեն չկար: Ու Նեն ստիպված մեռավ:-
Այս բանաստեղծությունը և հանգավորված է, և իրական:

Թոշակառու հոգեբույժ

Երիտասարդներն այսօր նշաններով չեն խոսում
և նույնիսկ չեն սովորում Մորզեի այբուբենը:

Լողացող փարոսներն արդեն հեռացել են,
նրանց վրա քրտնաջան աշխատող մարդիկ նույնպես,

ովքեր իմ փոխարեն նայում էին ծովին: Ես միշտ գիտեի՝
որտեղ են կառանվում բառ-խութանշանները,

բայց ինչ-որ մեկը շարժել է դրանք՝
նենգադուլավորներն էին,
եւ դա իմ վերջին ցնցակաթվածն էր: Ես արցունք եմ
տեսնում

պատռված ալիքի մեջ, և ես լսում եմ վտառների
աղմուկը, որոնք կկործանեն ինձ. եւ դա այնքան մոտ է:

Թեթև մթնոլորտի՝ գետաբերանի լայնքով
այլոք գերահիրաշ լուռ գեղեցկության

առագաստանավեր են դուրս հանում և
ինձ պես անշշուկ սահում ի բաց ծով:

Հիշատակի ծառայություն

Օրիորդ Դ

Երբևիցե ոչինչ չի օգնել նրան:
Նա զբաղվեց հոբբիով և նույնիսկ
փորձեց խզել կապն իր մեռած մոր հետ:

Մի պահ թվաց, թե ամեն ինչ լավ է:
Նա լավատես էր, զանգահարեց ինձ՝ թե իրեն
դուր են գալիս դասընթացները: Նա այնքան թույլ էր,

սակայն եւ ոչ մեկը չի կարող տալ ուժն իր հոգալու
ուրիշին: Ես կասեի՝ ոչինչ
փոփոխություն չբերեց: Օրվա վերջում նա պարզապես

հոգնեց: Հույսը նույնպես ջանք է պահանջում եւ
սպառվում է այն միաժամանակ: Նա անջատում գծեց:-
Ի՞նչ շանսեր կան, երբ աղջիկը խորտակված է:

Ménage à Trois[1]

I Մարմին

Մարմինս ուղարկեցի Բոլիվուդ՝
աստղ դառնալու: Նա կրում էր ուլունքներ
Գանգեսի պատկերներով:

Հոգուց դուրս գտնվող մարմինը
հակված է փորձել ամեն ինչ՝ շարժուն
տղամարդ, հետո, տրտմելով՝ պատահական կին:

Նա նոր սովորություն ձեռք բերեց՝ դաջվածքներ անել,
ամուսնացավ գանգստերի հետ, տարվեց խաղով,
և նյարդային խանգարում ստացավ: Ամոթը

գրեթե սպանեց նրան: Ես վճարեցի տաքսու համար,
երբ նա վերադարձավ: Հարևաններն ուշի-ուշով
նայում էին:
Տունն ամենաամուր վայրն է գտնվելու համար:

---

1. Ménage à Trois(ֆր.) - Ընտանիք՝ երեքով:

II Հոգի

Նա շրջապատում հայտնի է որպես սպիտակաշոր կին՝
ագորաֆոբիայով[2] տառապող, ով պատվիրել է ամբողջ
նպարեղենը: Համարվելով ցավամոք միջոց՝

այս մանվող հոգին հանրային տիրույթում
դանդաղ մահանում էր հեգնանքից,
ասես սպառվում էր: Նրա դասական հայացքը

կարիք ուներ մարմնի, որ ճամփա կստեղծեր
փողոց իջնելու՝ բևեռահող բերելու
մի էության համար, որն այնքան անբիծ էր.

նա վերացական էր, չէր շիկնում նույնիսկ,
չէր զգում արևի ջերմությունն իր ոսկորներին,
անգամ՛ սրտի բերկրանքի հարձակումն իր վրա:

---

2. ագորաֆոբիա - փոգնապային խանգարում, որի ժամանակ մարդը ընկալում է շրջապատող աշխարհը ոչ անկրանգ, չունենալով փախուստի հեշտ ճանապարհ:

III Երրորդը

Բայց մարմինն անհավատարիմ է և թողնում է հոգին
մեկ այլ երկրպագուի համար: Կիսամերկ
բժիշկների առջև՝ նրա երկրաչափական մարմինն
ընկնում է

մահվան համար, որն ուզում է դա՝ հիվանդություն եւ այլն:
Հրապուրանքը մոլեկան է, այն ինքնաբերաբար
ձգում է քեզ
հորիզոնական դիրքով եւ տանում իր փափուկ
խալաթից ներս,

ձեռքն առնում խոսքդ, հիշողություններդ ու նույնիսկ
շունչդ:
Միայն դրանից հետո կարող ես զգալ մռմռող հոգիդ,
հրաժարվել նրա պատմությունից, նրան պատկանող
հողից՝

բարձրանալու հանց տիեզերանավ, որը կողպել է
նրա դռները
հրաշալի տեխնոլոգիայով, գերբնական լույսով,
ինչը ստիպված կմոռանանք, երբ դուրս լինի արդեն
տեսադաշտից:

Ալեհերձը

Իոսիֆ Բրոդսկու հիշատակին
(1940-1996)

I

Բանաստեղծն ունի չորս մարմին:
Սովետական իշխանությունները
անչափ ուշացան առաջինից,
Ձեր անձնական պետական կառույցից,
որն ընտրել է ժողովրդավարությունը,
և թաղման սրահը,
որտեղ վարկի մարումը
ամբողջովին Ձեզ էր վերապահվել:
Դուք հանգստացաք այնտեղ, արշիպելագ:

Ձեր կինը երկրորդն էր՝
գրության հիմքը,
ում առջև խոնարհվում են բանաստեղծները,
հանգույցը իրերի և հանգի միջև,
ժամանակի հետ ընդհարվող սերը սպանիչ:
Ձեզ տրված սիրտը: Դրա մետրոնոմը[1]
ենթգ գտնվեց Ձեր հանդեպ:
Այժմ դուք՝ ոչ, բայց Ձեր երկտողերը ուշադիր դիտում են.
Դուք թողել եք բոլոր ցանկությունները՝ փորձելու
ամուսնական երկտողեր խորիմաստ պոեզիայում:
Առանց ձեզ ձեր այրին ապրում է չափածո խոսքում:

---

1. Մետրոնոմ - (հունարեն չափ և կանոն բառերից)՝ չափահար, երաժշտության կատարման արագությունը ճշգրիտ որոշելու և վերարտադրելու գործիք:

Երրորդը ձեր ստեղծագործությունն է:
Գրքերը թռչում են թռչունների պես
մեր բաց ափերից և կերակրվում
մեր ուշադրությամբ, երբ կարդում ենք դրանք:
Մենք հոժարակամ տալիս ենք մեր շունչը Ձեր բառերին:

Չորրորդը Ձեր հոգին է:
Այն դուրս թռչեց բազեի պես՝
այլ գործերի համար, անկասկած:
Իոսիֆ, թող գիշատչի արցունքները ձյան փաթիլների պես
հետ թափվեն դատարկության մեջ, մինչև որ լեզվածայրը
բռնի դրա բյուրեղներից մեկը, որ ոչնչի սարսափից բացի
այլ համ չզգա՝ ավելին արտահայտելու համար:

II

Նույնիսկ առողջ սիրտն է կաղում՝
իր յամբական ոտանավորը քարշ տալով սյունից մինչև
գուբ, իսկ յուրաքանչյուր փորոք աշխատում է նույն

արատավոր հնչանկումով. «Ե՛ս եմ, ե՛ս եմ»:
Բժշկական հաշվեպիտակները թանկ զարդեր են:
Քո կյանքի երկարությունը ցույց է տալիս

սրտագրությունը, ամեն գագաթնակետի գտնվում են
բառերը:
Ուրեմն՝ յուրաքանչյուր պոետի կյանք զբոսանք է սրտում՝
լցված աշխարհի սուլոցով: Դադար: Հետո՝ դահլիճ:

III

Բանգորի կառանման տեղում քամին արցունքներ է
պոկում
իմ աչքերից՝ տախտակամածի երկայնքով քայլելիս,
զգում էի իմ սովորական գլխապտույտը
ներքևի բուռն մակընթացությունից:

Դուք հորիզոն եք ինձ մաղթել այլ վայրում:
Ես շարունակում եմ քայլել. յուրաքանչյուր փայտե
շերտաձող
Ձեր աշխատանքի մի տողն է, որ կպահի իմ
ծանրությունը
Մենայի նեղուցի հոսանքի վրա:

Նույնիսկ բացակա՝ Դուք ինձ ամուր հող եք տալիս:
Վեց շերտաձող էլ՝ ու ես արդեն եզրին եմ:
Դուք ասել եք՝ տոկունությունը ոճի խնդիր է:
Ես գտնում եմ այդ հորիզոնը և պահում այն
պողպատի պես:

Երկրորդային տեսիլք

I

Ոչ բոլորն են տեսնում, բայց ես նկատել եմ տղամարդ
մեր ներսի տերիերում[1]: Մենք բարձրանում էինք
արահետով,
նա կանգ առավ մի պահ՝ ինձ տեղ տալու՝ անցնել

դարպասի միջով, այնքան քաղաքավարի, որ իմ
ներքին աչքը
առաջին անգամ տեսավ նրա մեջ
ոչ թե շուն, այլ մարմին՝ նուրբ քարայծի տեսքով,

արքայազն՝ բարձրահասակ, մինչ ազդրը հասնող
ճտքակոշիկներով:
Ասացի, որ կամուսնանամ նրա հետ: Սեպիա[2] փողոցի
լույսերը
մեր վարագույրները կլինեն, ես սիրով բացեցի
կողպեքները

մեր արքունական օջախի: Հետո, վերադառնալով
չորքոտանի կեցվածքին,
նա, խոհանոցի դռան մոտ կանգնած, ճոճում էր պոչը:
Գեղեցկությունը թաքնված է գազանի մեջ: Սա է օրենքը:

---

1. Տերիեր – շան ցեղատեսակ

2. Սեպիա - (լատ.՝ sepia), բաց դարչնագույն ներկանյութ՝ ծովային փափկամորթների թանաքապարկից: Օգտագործել են եվրոպական գեղանկարիչները 18-րդ դարում:

II Աստվածները դեռ շրջում են Հարավային Ուելսում

Մոնիկո կինոթատրոնի մոտ, խցանման մեջ
մի աղջիկ պարապուքյունից Ապոլլոն կանչեց,
բայց նկատի չուներ նրան: Անծանոթ մեկը մոտեցավ:

«Կբարձրանաք խուքանշանի ուղղուքյամբ», - ասաց նա:
«Ես քո աղոթքների պատասխանն եմ՝ վտանգավոր մարդ,
ոչ թե deus ex machina[1], այլ՝ կառքի միջի խենթ»:

Ուստի, նա քշեց՝ դրդված նրա նշան բռնած Ստենլի
դանակից,
վախենալով վարսահարդարի՝ իր կյանքի համար:
Բ ճանապարհներին նա տրվեց նրան, բավականին,

կայանատեղում, գետի մոտակա գեղատեսիլ վայրում՝
բավարարելով առևանգման իր երազանքները:
Ասում են՝ նա այդ ամենը ծրագրել էր: Բայց ինչպե՞ս նա

ուրախանար, երբ նրա հարևանները
կանչեցին նրան բոլոր անուններով: Ինչպե՞ս նա հիշի
սիրո նման փոխադրումն ու ոսկե ցնցուղը:

---

1. deus ex machina (լատ.՝ բառացի՝ ասուված մեքենայից) - Հին հունական թատրոնում դրամատուրգիական և բեմական հնարք, գործողության հանգուցալուծումը ասուվածության միջամտությամբ, որը հատուկ վերամբարձ մեքենայով (Էորեմա) անակնկալ բեմ էր իջնում: Նրա շնորհիվ էր վճռվում ողբերգության հիմքում ընկած կոնֆլիկտը, որոշվում հերոսների ճակատագիրը:

III Տեսարան օվկիանոսի վրայով՝ անցնող ինքնաթիռից

Իհարկե, բանաստեղծ Խուան Ռամոն Խիմենեսը
տեսել է՝ ինչպես են ծովահարսերը սուզվում սնդիկի
ծովերում,
Ամերիկայի ափերից դուրս: Հիվանդությունը

բառացիորեն կնշանակեր, որ նրա աչքերը կարող էին
կենտրոնանալ փոխաբերության վրա: Լամանտինները
ջրահարսեր էին: Ֆուրիաներն[1] ավելի ուշ հայտնվեցին:

Նման կերպարների հայտնությամբ դու ավարտվում ես:
Թվում է՝ հանդիպած բաներն այլևս չեն գտնում
իրենց տունը:
Ծովահարսերը երբեք չէին դադարում երգել նրա համար:

---

1. Ֆուրիա - Վրեժի չար աստվածուհի

Քառսի հրեշտակներ

1 Հեթանոս Հրեշտակ

Դուք հարցնում եք ինձ՝ ինչպե՞ս է, որ մենք գիտենք՝
Աստված է խոսում, այլ ոչ թե մենք: Երբ նույնիսկ քարը
կարող է պատկերել շուշաններ, և երբ այն ընկնում է,
ապացուցել՝ արագությունը մեծ է ձգողականության
ուժից:
Իսկ եթե մենք ընդհանրապես չլսենք,
երբ զրուցասեր երկինքները կանչեն
ինֆրակարմիր և գամմա-ճառագայթներով,
ռադիո-ազդանշաններով:
Սիրտը տաճար է, որի հանկարծակի մահը
հեթանոսական ծեսերի ներկայացում է: Քամին փչում է՝
քարե բարավորներով երկնելով մեղեդի
բացակա մարմինների մասին:
Դուք կրկին ու կրկին հարցնում եք ինձ.
«Որտեղից լսենք հրեշտակի ձայնը»:
Սիրելիս, ձկնկուլը: Սաստկացող անձրևը:

2 Տարոտ* Հրեշտակ

Դու կարող ես հետապնդել նրան մարսելյան տարոտի
միջոցով:
Ահա աշտարակը գահավիժող մարդկանցով ու
խորտակվող պատրանքներով: Եղիր շատ ուշադիր,
եթե հասկացել ես, թե այս ամենն ինչ է նշանակում.
դա նրա բաժինն է: Ի վերջո, մենք սարսռում ենք
մահվան խաղաքարտից և կախված՝ մարդուց,
թեպետ պարզ չէ բնավ, թե ինչ են նրանք նշանակում:

Պետք է ապրել: Իհարկե, մենք բոլորս մեռնում ենք,
բայց ապրում ենք այնպես, կարծես դա անհնար է:
Ո՞վ է ասում՝ իբր հիմարություն է դա: Բայց կարող է այն
իրականանալ:
Անցիր ժայռն ինձ հետ, Անմիտ, բաց մի թող
փոխվելու հնարավորությունը: Մահացիր ամեն օր,
ասես դու ապրում ես՝ կարծելով, իբր,
այդ լայն ճամփաները նվաճում են երկինքը բոցավառ:

---

*տարոտ - խաղաքարտ՝ խաղալու և բախտ գուշակելու համար

3 Կրակի Հրեշտակ

Մինչ օրս երաժշտությունն է պահում եկեղեցին -
գունային հենարանները, դողդոջուն հրաշալի ձայնի
համար
կամարակապ այս տարածությունը, գմբեթն էլ
ոչնչով չի սահմանափակում երանորեն հառնող
ելևէջներին,
թողնելով անգամ, որ հողմացույցը պտտվի իր կամոք՝
տրվելով եղանակային քմահաճույքներին:
Մեղեդին, մի անգամ, հաղթահարել է կրակը:

Բայց ես այլ կերպ եմ տեսել ամենն այդ: Մի ուղեկից տղա,
ով վառել է պլաստիկ շիշը, վրդովված
ցույց էր տալիս ինձ ստորգետնյա ուղին
Աքքայում՝ կարծելով, թե ես վախենում եմ, սակայն
ես չէի վախենում, և նա ինձ տանում էր ավելի հեռու՝
դեպի առկայծող մի հին դամբարան, մի զորանոց՝
կառուցված խաչակիրների ձեռամբ, հիշվող,
բոցավառված:

4 Բեմի և էկրանի Հրեշտակներ

Հոլիվուդում յուրաքանչյուր դերասան գիտի,
որ պետք է հետևել որոշ կանոնների:
Մի օրորիր գլուխդ աղջիկների հետ խոսելիս:
Աշխատիր գործողությունը ճիշտ կատարել:
Հետևիր նաև հմայագեղությանդ.
կոփիր մարմինդ մարզասրահներում:
Ահա աստղ դառնալու ճանապարհները:

Հրեշտակները, սակայն, հակառակն են:
Ժամանակակիցները
հայտնվում են ռադարում, նավաստիները
տեսնում են ավելի խորքը, քան հեռուն: Ոչ,
«Ես, Ես, Ես» -
սրանք հաղորդագրություններ են առանց հասցեատիրոջ,
համենայն դեպս, մենք այդպես գիտենք: Երկյուղածորեն
անձնակազմը շրջապատված է հրեշտակներով, որ
պարականոն
շարժումներով աներեւույթ պարում են հարթ-խաղաղ
ծովում:

5 Նվազագույն Հրեշտակ

Ամենափոքր հրեշտակը, որի մասին տեղյակ ենք,
«անբան է»: Փոշու հրեշտակ,
հրեշտակ ցողունի բջիջների, ծաղկափոշու,
ճյուղերի հրեշտակ, որոնք բաժանվում են անտեսանելի
մասերի, բայց նրանք պատրաստ են աճել,
դառնալ ավելին, քան ժամ առաջ էին:
Շան հոտառության հրեշտակ, հրեշտակ աստիճանների,

այգեգործության, ամուսնության: Քերովբե՝
փտած աղբի, հեռուն տեսանող,
անձրևից հետո գոյացած կպչուն ագուռների:
Ճառագայթման հրեշտակներ, ցեխի հրեշտակներ,
արգելքի եւ բյուր պարագաների հրեշտակներ,
այստեղ գտնվող, մեզ շրջապատող հրեշտակներ,
մի խոսքով՝ «Դուք պատրաստ եք արդեն աղոթքի
համար»:

6 Հուսահատության Հրեշտակ

Ինչո՞ւ հրեշտակը պետք է ընտրի՝ գա՞լ, թե՞ չգալ այստեղ,
եթե անհրաժեշտությունը դրա չկա: Կաղամբահոտ,
մգլոտած սենյակներ: Ձանձրույթով համակված անցյալ
ու ներկա,
որ ձգողականության ուժի պես ձգում են ազատ
ու անկախ
բոլոր սուրհանդակներին և նրանց, ովքեր ստիպված են
կրել
կեղտոտ կոստյումներ, այնպես, որ մարդիկ
խուճապի չմատնվեն: Մի՞թե հրեշտակն էլ է
հուսահատվում:

Մի ասա, որ պատիվ է պայքարի մեջ մտնելը
հուսահատված հրեշտակի հետ: Նա միշտ հայտնվում է
իմ սիրածի դեմքով, քանզի ճանկում է
շունչս իմ նյարդային համակարգից, ծածկում է
դեմքս երբևէ չմաքրվող աղտով:
Այո, ես ծեծված եմ, եւ իմ կաղությունը
լավագույն մասն է իմ էության մեջ: Եվ վնասվելուս
պատճառը խոր:

7 Ինչպես հասկանալ Հրեշտակներին

Տեղեկություն, այո, բայց դա բավարար չէ,
կա նաև ուրիշ ծառայություն, այլ հաղորդագրություն:
Սուտը հերքված է,
ինչ-որ բան ներված, փոփոխական աշխարհն
առկայծեց մի պահ. ինչ ուզում էիր լսել, չէիր հավատում,
որ դա հնարավոր է: Դու քեզ հիմարացած ես զգում,
բայց, ինչևիցե, մի բան ձեռնարկում ես և լցվում
խինդով, կարծես նոր թև ես հայտնաբերել

թռիչքի համար: Եթե ամեն ինչ խաղաղ է, ուրեմն
ձախ դաշտի հարձակումից հետո դու մնացել ես
հրեշտակների հետ. երբ քիչ ես վախենում
եւ քիչ ես վստահում ինքդ քեզ: Բայց զգուշացիր
այլ ձայներից. ավելի դյուրին է ըմբռնել
հրեշտակների կանչերը, քան հրեշտակներին,
սակայն մի դաղարիր իրարանցման մեջ ոգել.
«Եվս: Եվս: Եվս»:

8 Կատերինա Ջեյմսի հիշատակին

Սպանված 2001թ. սեպտեմբերի 11-ին

Դուք կարող եք հավատալ Աստծո գոյությանը,
բայց սատանան է հաղորդակցման միջոցը: Այո,
բացի այդ, դևերը մենք ենք՝ սքողված հրեշտակային
նուրբ ձայներով: Նրանք չեն զարմացնում, միայն
հաստատում են մեր ատելությունը: Մենք ընդունում ենք
հեշտությամբ, որ նրանք անհեթեթ
հաղորդագրություններ են,
պատրվակ եսասիրության ու խենթության համար:

Նա երաժիշտ էր և սովորություն ուներ
թողնել իր մարմինը և զբոսնել լայն
պողոտաներով ու արևոտ սյունասրահներով,
որոնք կառուցել է մեղեդին: Նա ականջ ուներ
իրենից վեր տարբեր բաների համար, կատարում էր
քո ցանկություններից ավելին: Ահա ինչու ես լսում եմ
նրա չքնաղ ձայնը ահավոր ոռնոցում:

9 Մահվան Հրեշտակ

«Քաբուլի բանտախցում մահացող մի ջահել
չէր դադարում երգել՝ երաժշտություն էր ստեղծում
ճիչերից.
չէր քնի, չէր խմի, բայց կհորիներ վայրագ նոտաներ
երազների համար: Նա ահաբեկել է մեզ բոլորիս,
բայց իր մահը պահել է անմար ջահի պես, որ
գնանք իր ետևից: Կամարները վետվետում էին
մթության մեջ՝ ստվերելով մեզ: Նա առաջնորդեց մեզ

դեպի սփոփանք, անցած փաստարկ ու հանցանք՝
մահացած մարդու սոսկալի էներգիայով,
ում մահն ավելի կյանք էր, քան մարմինն ուներ,
սկիզբ էր, ոչ թե վերջ: Այս ճշմարտությունը
խեղդում էր ողջերիս: Հետո լռությունը երգում էր
նրա տեղ…
Ես չեմ մոռանա նրան: Ոչ, մի հարցրու
մեռնելու մասին: Խնդիրը ինչպես ապրելն է»:

10 Բժշկության Հրեշտակ

Յուրաքանչյուր հիվանդություն արվեստի գործ է,
եթե նրա հետ ճիշտ ես խաղում: Իհարկե, այն ցավ է
պատճառում
դժոխքի պես, բայց կարող է օգտագործվել նաև
որպես հիշեցում, որ քո միտքը
նրա զբաղմունքը չէ, թեկուզ «այդ պահին»,
ինչևիցե, ցավեցնում է: Նովալիսը* կարծում էր, որ
երաժշտությունը կարող է բուժել ամեն հիվանդություն:

Նա նկատի ուներ՝ ինչ հիվանդություն էլ լինի
առաջացած արթրիտից թե հոդատապից,
թող քո գործը դառնա հանգստանալը՝ սահմանափակելով
նրա պաշտոն-դիրքը և ստիպելով նրան անդադար երգել՝
նույնիսկ մինչև մահ: - Եվ սա՞ է ամբողջ վերահաս ցավը:
Քո սիրեցյալի անունից սուրհանդակներ կգան
ազդարարելու.
«Սպասիր ինձ, սիրելիս, ես ճանապարհին եմ»:

**Նովալիս - բուն անվամբ՝ Գեորգ Ֆրիդրիխ Ֆրայհեր ֆոն Հարդենբերգ՝ գերմանացի բանաստեղծ, արձակագիր, փիլիսոփա, գիտնական:*

11 Լավը, վատը և խճճվածը

Հրեշտակների կանոնակարգում կա քաոսի տասներկու
աստիճան: Անհեթեթություն, ապա ծեծկռտոց,
հետո բարբաջանք, որ հետզհետե դառնում է շաչյուն:
Քնածների ցնորային երազները հրաշք քաղաքներ
կստեղծեն, մինչ նրանք կարթնանան
և տեղում համաղետի պատճառ կդառնան:
Կան կործանման հրեշտակներ, և կործանումը

նրանց մասնագիտությունն է: Անկման հրեշտակներ,
էնտրոպիայի հրեշտակներ: Հրեշտակներ, ովքեր
ասում են
քեզ ինչ անել, երբ (մոտ ես դժոխքին),
մանրախնդիր հրեշտակներ, Օրենքի հրեշտակներ:
Խճճվածները գիտեն ինչի համար է քաոսը -
ինքնամոռացության - և մեծագույնը
Ոչինչ Այլևս Չիմացող Հրեշտակն է:

12 Քրիստոս Աստծո կամքի Հրեշտակ

Ինչ կլիներ, եթե սավառնեինք մեր կարիքներից վեր՝
հանուն հրեշտակների: Պարզապես հանգստի համար
կարող էր մեզնից պահանջվել մեկ դար: Գրավիչ
զգացողություն է, բայց շատ երկար: Մենք կհասկանանք
և հեշտ կհաշվարկենք շնորհքի լոգարիթմների
լուծումը մեր կարճ քնի մեջ:
Հաղորդագրությունների կարիք չկա, բայց

դրանք կան դարձյալ, ուղիղ ա՛յն վայրում,
որի քարտեզը մեր ձեռքի տակ է: Քանզի այստեղ է
մարդասպան խոպան հողը: Ազատ լինել
հավաքելու եղինջի ծաղկեփնջեր, լինել
այդ կրքոտ համբույրները, այդ տաքարյուն ցա՞վը:
Չհնազանդվել ցավին, քանզի տեսնում ես, որ
Քրիստոս բերում է գթության թրթնջուկի անվրդով
տերևներ:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Գվինեթ Լյուիսը Ուելսի Ազգային բանաստեղծի կոչումն է կրել 2005-06թթ.: Նա առաջին գրողն է Ուելսում, ով արժանացել է այդ տիտղոսին:

Հրատարկել է բանաստեղծությունների ինը գիրք՝ վալիերեն եւ անգլերեն:

«Քաոսի հրեշտակները»(2005) ներառում է բանաստեղծությունների իր առաջին երեք անգլերեն հավաքածուն:

Նրա «Առակներ և հեռապատճեններ»(1995) ժողովածուն արժանացել է Ալդեբուրգի /Aldeburgh/ պոեզիայի փառատոնի մրցանակին: Իսկ «Ճնճղուկի ծառը»(2011) բանաստեղծական գիրքը նշանավորվել է Ռոլանդ Մաթիասի անվան մրցանակով:

2010թ. Ուելսի գրողների միության կողմից նրան շնորհվել է Չամլի մրցանակ գրական ակնառու նվաճումների համար:

Գ. Լյուիսի առաջին ոչ գեղարվեստական գիրքը՝ «Արևայրուք անձրևի տակ»(2002), ներկայացվել էր տարվա «Մտքի գիրք» անվանակարգում:

Նրա առաջին հեռուստատեսային սցենարը՝ «Հարվածը և ես», գրված S4C-ի հանձնարարականով, 2015թ. BAFTA Wales կինո- և հեռուստաարվեստի բրիտանական ակադեմիայի կողմից ստացավ մրցանակ «Լավագույն դրամա» անվանակարգում:

Գվինեթ Լյուիսը միաժամանակ դրամատուրգ է եւ լիբրետոների հեղինակ. գրել է երկու կամերային օպերա երեխաների համար և օրատորիա, որոնք ներկայացվել են Ուելսի ազգային օպերայում:

Բանաստեղծուհին 1982-85թթ.-ին Հարկնեսսի թոշակակիր էր, սովորել է Հարվարդի համալսարանում, Նյու-Յորքի Կոլումբիայի համալսարանի գրական բաժնի շրջանավարտ է:

2008-09թթ. նա Ռադկլիֆի ինստիտուտում՝ Միլդրեդ Լոնդա Ուայզմանի թոշակակիր էր, իսկ 2009-10թթ-ին՝ Ստենֆորդի համալսարանի արվեստի և հումանիտար գիտությունների՝ Ջոյնթ Սիքա կենտրոնի գիտաշխատող:

2014թ.-ին բանաստեղծուհին հրավիրվել էր Փրինսթոնի համալսարան՝ որպես պոեզիայի և անգլերենի հրավիրյալ դասախոս: Դասավանդել է ԱՄՆ-ի Վերմոնտ քաղաքի Բրեդ Լոուֆ դպրոցի անգլերենի մասնաճյուղում, իսկ 2016-ին՝ Ռոբերտ Ֆրոսթի գրականության ամբիոնում:

Նա և Ռոուան Ուիլյամսը հրապարակել են «Թալիսին» գրքի թարգմանությունը (Penguin Classics, 2019), որը Ուելսի արվեստի տեսության կոմիտեի կողմից ճանաչվել է տասնամյակի գրքերից մեկը:

2020-ին Գվինեթ Լյուիսը ընտրվել է Օքսֆորդի Բալիոլի քոլեջի պատվավոր անդամ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգեզալուստ 5
Սքոմերի դաշտամուկը 7
Փնտրելով կելտեր ցեղախմբին 9
Սովետական մատուցողը 10
Շրջանը վերածել քառակուսու 12
Հոգու հանքահորը 14
Վատ հովիվը 15
Դառնալով հասարակ 16
Տեղեկատու գրադարան 18

ԶՐՈ ՁԳՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 20
I Նախաբան 20
II 22
III 23
IV 24
V 25
VI 26
VII 27
VIII 28
IX 29
X 30
XI 32
XII 33
XIII 34
XIV 35
XV 36
XVI Վերջաբան 37

Ծղրտացող ջրցուլը 38
Լավ շուն 39
Հոգու մոմեր 41
Երաշտ 44
Խոսիր գլխացավի հետ 45
Գարուն 47
Աղոթք Բենդիի համար 48
«Մի օր, քաղցած» 49
Քարե պատեր 50
Անտառ 52
Կարմիր ուրուրներ Տրեգարոնում 53
Ճգնավորներ 54
Քարե շրջան 55
Հնաշունչ մորաքույրներ 56

Մտքի թանգարանը 57
I Թանգարանի վարիչը ողջունում է Դոն ալիքը 57
II Պատմության Դաս 59
III Կայքի ապագան 60
IV Հաղորդակցություն 61
V Հերթապահը 62
VI Գիշերային պատկերասրահներ 63

Խամրած ափ 64
Պոետի խոստովանությունը 65
Ի՞նչ է անունը 66
Այց ագարակ 67
Տնական ճաշ 69
Փոքրիկ հողամաս 70
«Հայրս հեռու էր…» 71

Անցյալ 72
Նրա վերջը 73
Աֆազիա 75
Հոգեկան ցնցում 76
Կյանքի փրկություն հոգեբույժների մոտ 77
Խորհրդատու 78
Բաժանում 79
Վաղ օրեր հոգեբուժարանում 80
Գտնելով մարմինները 81
Լեզվի ֆետիշիստ 82
Պատանու խենթություն 83
Թերապիա 85
Խոստումնալից առաջընթաց 87
Տարածեք մի քիչ երջանկություն 88
Ուշագնացության տաղանդ 89
Հոգեբույժ Տվիտչեր 90
Հարց 91
Խուճապի գրոհը 93
Ծովափնյա առողջարան 94
Գիշերային երթուղի դեպի Նանթաքետ 95
Կատարյալ հանցագործություն 96
Թոշակառու հոգեբույժ 97
Հիշատակի ծառայություն 98

Ménage à Trois 99
I Մարմին 99
II Հոգի 100
III Երրորդը 101

Ալեհերձը 102
I 102
II 104
III 105

Երկրորդային տեսիլք 106
I 106
II Աստվածները դեռ շրջում են Հարավային Ուելսում 107
III Տեսարան օվկիանոսի վրայով՝ անցնող ինքնաթիռից 108

Քառսի հրեշտակներ 109
1 Հեթանոս Հրեշտակ 109
2 Տարոտ Հրեշտակ 110
3 Կրակի Հրեշտակ 111
4 Բեմի և էկրանի Հրեշտակներ 112
5 Նվազագույն Հրեշտակ 113
6 Հուսահատության Հրեշտակ 114
7 Ինչպես հասկանալ Հրեշտակներին 115
8 Կատերինա Ջեյմսի հիշատակին 116
9 Մահվան Հրեշտակ 117
10 Բժշկության Հրեշտակ 118
11 Լավը, վատը և խճճվածը 119
12 Քրիստոս Աստծո կամքի Հրեշտակ 120

Հեղինակի մասին 121

Խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեւոսյան
Էջադրումը՝ Ա. Խաչատրյանի
Կազմի ձեւավորումը՝ Ք. Դոլուխանյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 8.25 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս»
հրատարակչության տպարանում
ԱՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016

Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուդդայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ
նախագծերի» - 2017

Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդոր Սոլոգուբ. «Ընչաղեւը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Մարտիրոս Ոբն. «Մոմերն իզուր են այրվել
մեղքերիս համար» - 2018
Ուեյսին Սյուրն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկու-
թյունները: Չինաստանի համաշխարհային
ժառանգությունը»- 2018

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 6) - 2018
Աղի ձայնը (20-րդ դարի հետուբսունական թվականների
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 7) - 2019

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +37497252323, +37494259161